№ 131 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 17

1906

ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 17 № 131

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ամեն տեղ 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Գրիգոր Եւանգուլեանը և Մարգարիտ Աբեանցը խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինի անմոռանալի ամուսնի և երկրորդի դստեր՝

ՍԻՐԱՆՈՅՇ ՄԻՆԱՍԵԱՆ ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ Պետերբուրգում, յունիսի 12-ին։ Ամփոփը կը կատարվի շաբաթ օրը, յունիսի 17-ին երեկոյեան ժամը 7-ին Աբեանցի բնակարանում, Գօլովինսկի պրօսպէկտ № 19։ Յուղարկաւորութիւնը Թիֆլիս կայարանից՝ կիրակի օրը, առաւօտեան ժամը 9-ին դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին, թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը, նոյն օրը։

Միքայէլ Սարգսեան Մաղաթեանը իր զաւակներով խորին վշտով ծանուցանում է ազգականներին և ծանօթներին, առաջինի թանգագին և անմոռանալի թոռան, իսկ միւսների քրոջ աղջկայ

ՍԻՐԱՆՈՅՇ ՄԻՆԱՍԵԱՆ ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑԻ

մահը, որ տեղի է ունեցել Պետերբուրգում ներկայ յունիսի 12-ին։ Հոգեհանգիստը շաբաթ օր, յունիսի 17-ին, երեկոյեան 7 ժամին, Աբեանցի բնակարանում, Գօլովինսկեայ պրօսպէկտ № 19։ Յուղարկաւորութիւնը կիրակի, յունիսի 18-ին, առաւօտեան 9 ժամին երկաթուղու կայարանից դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին, թաղումը նոյն օրը Խօջիվանքի գերեզմանատանը։

Աննա Միքայէլեան և Լևոն Իվանօվիչ Ղուլեանները սրտի թախիծով յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց քրոջ աղջկայ

ՍԻՐԱՆՈՅՇ ՄԻՆԱՍԵԱՆ ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որ տեղի է ունեցել Պետերբուրգում ներկայ յունիսի 12-ին։ Հոգեհանգիստը շաբաթ օր յունիսի 17-ին երեկոյեան 7 ժամին Աբեանցի բնակարանում։ Յուղարկաւորութիւնը կիրակի օր, յունիսի 19-ին, առաւօտեան 9 ժամին երկաթուղու կայարանից դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։

ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

սրանով յայտարարում է, որ այս տարվայ սեպտեմբերի 1-ից բացվում է երեք պատրաստական դասատուն։ Այդ դասարաններում ընդունելութիւնը կը կատարվի քննութիւնով։ Պատրաստական դասատուները մտնելու համար կանոնները և ծրագիրները կարելի է ստանալ առևտրական ուսումնարանի շինութեան մէջ՝ Հալաբար Պրօվիանտսկի հրապարակ, ամեն օր ցերեկվայ ժամը 9-ից մինչև 1 ժամը։ Ուսման լիակատար ընթացքը 6 տարվայ է։ Պատրաստական դասարաններում ուսման տարեկան վարձը քառասուն (40) րուբլի է, Ընդունելութեան քննութիւնների երբ լինելու մասին առանձին կը յայտարարվի։

(ու.կ.ե.) տռ. 2—5

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԱՒԱԳԻ ԸՆԿԵՐ
ԱՐԿԱԴԻՒՍ ՆԱԶԱՐՕՎԻՉ ՄԻԼՕՎԸ

խնդրում է Թիֆլիսի պ.պ. արդիւնաբերողներին, վաճառականներին և առևտրականներին, որոնք տուրք են տալիս առաջին 3 կարգի պրօմիսլային վկայականներով, շնորհ բերել ընդհանուր ժողովին, որը կայանալու է կիրակի, յունիսի 18-ին, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլիսի ժողովարանի ձմեռային շինութեան դահլիճում (Գօլօվինսկի պրօսպ. տուն Մանթաշեանի) Թիֆլիսի առևտրա-արդիւնաբերական միութեան նախագծի դրութիւնը քննելու համար։

տռ. (հ.ու.շ.) 3—3

ԿՈՉ

Թիֆլիսի Առևտրական Նաւթարդիւնաբերական Ընկերութեան բաժնետէրերին կիրակի, յունիսի 18-ին կը կայանայ բաժնետէրերի երկրորդ վերջին ժողով ընկերութեան ապագայ գոյութեան մասին։ Իմացէք պ.պ. մանր բաժնետէրեր, ամբողջ դրամագլուխը, 250 հազար րուբլին, ծախսված է, պարտք ունենք էլի մօտ 50 հազար րուբլի. հողերը փչանալու պատճառով օգուտ չեն տալիս։ Ընկերութեան հիմնադիրները և յետոյ այն անձինք, որոնք իրանցից կազմել են ընկերութեան վարչութեան նախագահ և կարգադրիչ Արշակ Սերգէևիչ Բաբօվը, Ստ. Խր. Սուլխանօվը և ուրիշները, որոնք անփոխարինելի կերպով կառավարում էին ընկերութեան գործերը, մեզ, մանր բաժնետէրեր-ակցիօներներիս հասցրին մինչև կործանումն։ Միանանք բոլորս, ներկայ լինենք յունիսի 18-ի ժողովին մեր գոյքը ազատելու համար։

(հ.շ.) 2—2

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան
Վարչութիւնը

յայտնում է, որ կիրակի, յունիսի 18-ին, առաւօտ. ժամը 11-ին, քաղաքային տան դահլիճում նշանակված է ընկերութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Զբաղմունքի առարկաներն են.

1. 1905 թ. հաշուի և 1906 թ. նախահաշիւների քննութիւնը և հաստատելը։
2. Վերստուգող յանձնաժողովի զեկուցումը։
3. Վարչութեան անդամների թիւը աւելացնելու հարցը։
4. Վարչութեան 3 հերթով դուրս գնացող անդամների և 2 հրաժարվողների փոխարէն (Տ. Յովհաննիսեանի, իշխ. Մ. Թումանեանի, Կ. Շիրինեանի, Գ. Մելիք-Կարագօզեանի և Լ. Տիգրանեանի) և նրանց 3 փոխանդամների ընտրութիւնը։
5. Վերստուգող յանձնաժողովի 3 անդամների և 2 փոխանդամների ընտրութիւնը։
6. Որբանոցի ամարանոց գնելու հարցը։
7. Փոխարքայից գաղթականների համար ստացած գումարի մնացորդով որբեր պահելու հարցը։
8. Ընկերութ. քարավանսարայի շահագործման հարցը։
9. Որբանոցում ուսումնարան բանալու խնդիրը։
10. Ընթացիկ հարցեր։

Այս ժողովը կը կայանայ քանի անդամ էլ որ ներկայ լինեն։ Ժողովին կարող են մասնակցել նրանք, որոնք վճարել են 1906 թւի անդամավճարը։

Ընկերութեան 1905 թ. տեղեկագիրը կարելի է ստանալ ընկ. գրասենեակում Абасъ-Абадская площадь, սեփական տուն ընկերութեան։

(ե. հ. շ. կ.) տռ. 3—4

Բագւում սկսել է լոյս տեսնել հայերէն և Թուրքերէն լեզուներով

„ԿՈՉ-ԴԱՎԷՏ“

շաբաթաթերթը, որ բացառապէս նուիրված է հայ-Թուրքական ընդհարումներին՝ նպատակ դնելով վերջ տալ ցաւալի եղբայրասպանութիւններին, սրանով կոչ է անում այն բոլոր անձերին, որոնց համար թանգ և նուիրական է այդ նպատակը, շտապեն թէ բաժանորդ գրվելով և թէ նիւթական նպաստներով աջակցել նրան և կարելիին չափ շատ տարածել թերթը իրանց շրջաններում։

տռ. 1—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցչական կազմակերպութիւնը. Վերջին տեղեկութիւններ. Շարժումներ. Մամուլ. Երևանի վերջին դէպքերը. Ուսուցչական համաժողովը. Ազնուականութեան վերջին ճէգը Թիֆլիսի պատուիրակների բանաձևը, Զարդերի սպառնալիքը. Հալվաբարի թատրօն. Նամակ Գանձակից. Նամակ Օլթից. Նամակ Ղզլարից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հարցապընդում բրիտանական համայնքների ժողովում Բելօստօկի ջարդի առիթով.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

VI

—Ոչ պակաս, քան 30 րուբլի դասագին գիւղերում և ոչ պակաս, քան 40 րուբլի, քաղաքներում։

Այդպէս է ձևակերպել ուսուցիչների մի խորհրդակցութիւն, ցանկանալով որոշ չափի տակ դնել ուսուցիչների ռոճիկը։

Դա նուազագոյն չափն է։ Իսկ եթէ հանգամանքերը ներեն՝ ռոճիկը կարող է աւելի բարձր լինել։

Նուազագոյն չափի որոշելը ունի բարոյական և իրական որոշ նշանակութիւն։ Նա ապահովութեան մի գրաւական է ուսուցչի համար, որի աշխատանքը սակարկութեան է դրված և չունի ոչ մի տեղից պաշտպանութիւն։ Նա շանթարգել է աշխատանքի հարստահարութեան դէմ, որին ենթարկված է եղել անցեալում հայ ուսուցիչը։

Մենք ցանկացել ենք և ցանկանում ենք ուսուցչի աշխատանքի պաշտպանը լինել և տեսնել մեր մատաղ մշակներին նիւթական զրկանքներից ազատ, բայց գտնում ենք, որ վերևի դրած պայմանաւորը իբրև ընդհանուր որոշում մեր բոլոր երկրի համար վաղաժամ է և աննպատակայարմար։

VII

Եւ ահա ինչու։

Չափեր որոշելու համար, նուազագոյն քանակներ սահմանելու համար պէտք է ունենալ որոշ նախապատրաստական նիւթ։

Պէտք է տեղեկութիւններ ունենալ մեր դպրոցական բիւջեաների և քաղաքների ու գիւղերի մի քանի պայմանների մասին և պարզել այն հարցը, թէ թեմերը կամ Էջմիածնի կենտրոնական վարչութիւնը մտադիր են իրանց կողմից նպաստներ տալ գաւառական դպրոցներին թէ ոչ։

Դա կարևոր է այն պատճառով, որպէս զի ռոճիկի համար որոշված չափը ունենայ գործնական նշանակութիւն և կարողանայ գործադրվել երկրի բոլոր մասերում։

Մեզ ծանօթ են բազմաթիւ գիւղական շրջաններ, որոնք ներկայումս չեն կարող ապահովել 30 րուբլի դասագինը և նրանք կարող կը լինեն իրագործել մի այդպիսի պայման, եթէ, դիցուք, թեմը կամ Էջմիածինը օգնութեան գային նրանց և գոնէ մի քանի տարիներ որոշ նպաստներ յատկացնէին դպրոցի ծախքերի համար։

VIII

Ապրել Թիֆլիսում կամ Բագւում, որտեղ բնակարանները և ապրուստը շատ թանգ են, թէ գաւառական մի փոքր քաղաքում, մէկ չէ։ Երկու դէպքումն էլ, ճիշտ է, մենք գործ ունենք քաղաքների հետ, սակայն ապահովութեան նուազագոյն չափը տարբեր է։

Մենք անկասկած շատ և շատ համակրութեամբ ենք նայում այն բանին, որ մեր գաւառական գործիչը լաւ կերպով ապահոված լինի, բայց մեր խօսքը այդ հարցի մասին չէ, այլ նուազագոյն չափի։ Կան գիւղեր և աւաններ, որոնք գաւառական քաղաքի հաշւում են և ամենևին չեն տարբերվում իրանց տնտեսական պայմաններով։

Աչքի առաջ ունենալով այստեղ յիշատակած, այլ և մի քանի ուրիշ հանգամանքներ, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ այժմեանից իսկ, ներկայ ուսուցչական ժողովի կողմից սահմանել վերև նշանակած չափը, իբրև ընդհանուր կանոն, ինչպէս ասացինք, վաղաժամ է և աննպատակայարմար։

IX

Գուցէ իբրև նախնական փորձ կարելի կը լինէր որոշ չափեր սահմանել մի քանի տեղերի համար, օրինակ Թիֆլիսի, Բագուի, մի քանի ուրիշ քաղաքների և մի քանի գիւղերի համար, բայց ընդհանրացնել բոլոր տեղերի համար—անկարելի է։

Այստեղ պէտք է ընդգծել մի խոշոր հանգամանք։ Դա մեր դպրոցական ցանցը խտացնելու հարցն է։

Այդ հարցը, որ ամենակարևոր և հերթական հարցերից մէկն է ներկայումս, դեռ չէ մտել իր կազմակերպական շաւղի մէջ այն ընդարձակութեամբ, որին նա կարող է և մեր ժողովուրդը իր համախոհականներով կամ ներկայացուցիչների բերանով չէ սահմանել պարտաւորական տուրքեր դպրոցական գործի համար։

Իսկ քանի ու թերի են և անմշակ շատ հարցեր, անշուշտ դժուար է առաջ մղել նրանցից անկախ մի այնպիսի որոշում, որ սերտ կապ ունի առաջինների հետ։

X

Եթէ ուսուցչական միութիւնը որոշէ կազմակերպել մի յատուկ բիւրօ ուսուցիչների և դպրոցական վարչութիւնների մէջ բանակցութիւններ վարելու համար, հարց է ծագում թէ այդ բիւրօն միայն իբրև միջնորդ մի գրասենեակ է, թէ նա և յանձնարարական պաշտօն է վերցնում իր վրա ուսուցիչների վերաբերութեամբ։

Կարևոր է սկզբից և եթ պարզել այդ հարցը, որպէս զի թիւրիմացութիւնների առաջն առնված լինի։ Եթէ ուսուցիչը դուրս եկաւ անպատրաստ, անբաւարար, օժտված զանազան պակասութիւններով, ինչ պատասխանատուութիւն է ընկնում բիւրօյի կամ ուսուցչական միութեան վրա։ Եւ արդեօք կան դէպքեր, երբ ուսուցչական միութիւնը խառնվում է իր անդամների գործունէութեան մէջ և ինչ սահմաններում։

Այստեղ բացվում է հարցերի մի երկար շարք, որոնք նշանակութիւն ունեն կեանքի մէջ։

Ա. Քալանթար.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դերբենդ, 14 յունիսի

Ամսիս 12-ին Բուլբուլ-քենդ գիւղում ստրաժնիկները բռնում են երեք աւազակների, որոնց կալանաւորած ահագին քանակութեամբ ստրաժնիկներով բերին Դերբենդի բանտը. տեսնենք քանի օր կը մնան բանտում, և ինչպէս կը պատժվեն. բռնված է և յայտնի աւազակ Ալմասը՝ Ղաշմաս կայարանում. Նրան տարել են Ղուբայի բանտը։

Դարգիման

—

Երևան, 14 յունիսի

«Մշակի» նախկին համարներից մէկում տպված էր Երևանից մէկ լուր, որ Շընգաւիթ հայ գիւղից Թուրքերն առևանգել են մէկ աղջիկ, որից յետոյ Ալեքսանդր Մելիք-Ազամալեանը կարողացաւ ազատել նրանց ձեռքից։

Անձամբ գնալով Շնգաւիթ և օրիորդից տեղեկանալով այդ անցքի մանրամասնութիւնները, շտապում եմ հաղորդել «Մշակի» ընթերցողներին։

Ամսիս 3-ին օրիորդ Շողեր Մխիթարեանը, որի հայր Մխիթար Մարգարեանը Շնգաւիթում հանգապահ է, առաւօտեան գնացած է եղել Գեղամ Մարգոսեանի այգին թութ ուտելու, կէսօրվայ դէմ այգուց մենակ վերադառնալիս, նրա ճանապարհը փակում է տեղացի Մամադ-Քեաբիմ այգեպան Մամադը։ Օրիորդն ուզում է օգնութեան կանչել, բայց Մամադ սպառնում է նրան սպանել, եթէ ձայն ծպտուն հանէ։ Այդտեղ վրա են հասնում երկու ուրիշ Թուրքեր, Ասադ և Յուսուփ անուններով, որոնց օգնութեամբ օրիորդին Մահմադը փաթաթում է եափնջու մէջ և հասցնում է Շխիմեանց Միքայէլի այգին, որի այգեպանը նոյնպէս Թուրք է և աւազակապետ։ Մինչև երեկոյ այդտեղ պահելուց յետոյ, երեկոյեան ձիով Շողերին հասցնում են շեղակի ճանապարհներով Զարբաթ գիւղն, ուր իջեցնում են նրան այգիների մէջ գտնված մեկուսացած տունը և յանձնում են Հուսէյին անունով մէկ Թուրքի։ Այդտեղ Շողերին 2 Թուրք կանայք լողացնում են, շորերը փոխում և պառկեցնում են Հուսէյնինի հետ քնելու։ Շողերն ընդդիմանում է, լալիս է. ուզում է փախչել. բայց ուր փախչէր. Թուրք կանայք և Հուսէյինը բռնում են նրան, մազերից քաշքշում, լաւ ծեծում և սպառնում են գլուխը կտրել, եթէ ընդդիմանայ։

Այդ գիշերը այնտեղ անցկացնելուց յետոյ, առաւօտեան, հետքը կորցնելու համար, Շողերին տանում են տեղական Սէյիդի տունը, ուր մնում է մինչև երեկոյ։ Երեկոյեան նրան տանում են Զանգու գետի ափը, ուր նրան ձիով սպասելիս է եղել յիշեալ Հուսէյինը, որ և նրան տանում է Դամրչի-Շուլու գիւղը, իր քրոջ տունը, ուր անց է կացնում Շողերի հետ այդ գիշերն ևս։ Թէ ինչ տանջանքներ է կրել այդ երկու գիշերը Շողերը, ես չեմ կարող նկարագրել, բայց թող ընթերցողն երևակայի 12 տարեկան դեռահաս աղջկայ դրութիւնը, որ կեանքական յարաբերութեան մասին հասկացողութիւն անգամ չունի, ենթարկված 40 տարեկան գազանաբարոյ Թուրքի անասնական կրքերին։ Դամրչի-Շուլուում Թուրքերն իմանալով, որ Շողերը հայր և եղբայր ունի և թէ նրանք կարող են վրէժխնդիր լինել, ցանկանում են վերջ դնել նրա կեանքին. բարեբաղդաբար այդ իմանում է մի բարեսիրտ Թուրք աղջիկ և զգուշացնում է Շողերին, որին երբ Թուրքերը հարցնում են՝ հայր և եղբայր ունի՞ թէ ոչ, նա պատասխանում է թէ ոչ։

Դէպքից անմիջապէս յետոյ, մի Թուրք Ալ. Մելիք-Ազամալեանին յայտնում է այս անցքը և խոստանում է տեղը յայտնել, եթէ յանցաւորներին պատասխանատուութեան չենթարկէ. նա էլ խոստանում է։ Հետևեալ օրն այդ Թուրքը և Մելիք-Ազամալեանը գնում են Դամրչի-Շուլու և Շողերին ազատում։ Բերելով Երևան, Մելիք-Ազամալեանը Շողերին ուղարկում է Շնգաւիթ, ուր յանձնվում է իր ծնողներին։ Յանցաւորները բանտված են։

Յ. Վարդանեան

—

Երևան, 14 յունիսի

Թուրքերի խանութները դեռ փակ են. թէպէտ հայերն էլ բանում են, բայց կեանքը քաղաքում առհասարակ մեռած է։ Թուրքերը դատարկում են իրանց խանութները։

Կիրակի, ամսիս 11-ին, թեմ. դպրանոցում հաւաքվել էր հայ հասարակութիւնը խաղաղարար կոմիսիայի նոր անդամներ ընտրելու։ Թէև 2—3 հոգի հարցը կտրուկ էին դնում, առաջարկելով ընտրութիւն չը կայացնել, այլ համախոհականով յայտնել կառավարութեանը թէ «իրանք այլ ևս չեն հաւատում և պահանջում են կառավարութիւնից, իր զինուորական ոյժով ճնշել անկարգութիւնները որ նա կարող է անել ամենայն հեշտութեամբ և ամենակարճ ժամանակում», սակայն ժողովի բացարձակ մեծամասնութիւնը աւելի «խոհեմութեան» կողմնակից եղաւ և նոր ընտրութիւն կատարեց ուղղակի սիստեմով։

Թիֆլիսում Երևանի հայ պատգամաւորութեան ունեցած անյաջողութիւնը ճնշող տպաւորութիւն առաջ բերեց այստեղի հայ հասարակութեան վրա։ Բժշկական քննութիւնը ցոյց տուեց, որ ամսիս 12-ին սպանված Թուրքը բոլորովին նոր խփված է եղել։

Լ. Մարկոսեան

—

Ամսիս 11-ին Դալմա կոչված այգիների ճանապարհին ընդհարում տեղի ունեցաւ հայերի և Թուրքերի մէջ, որի ժամանակ 1 Թուրք սպանվեց և 1 վիրաւորվեց։ Ընդհարման պատճառն յայտնի չէ։

Ղամարլուի կողմերից ստացված լուրերը յուզիչ են. ամսիս 11-ին իրան այգում զբօսնելիս սպանվել է Մինաս Գալուստեանցը դարանամուտ եղած Թուրքերից։

—

Ամսիս 13-ին Երևանի նահանգապետի կարգադրութեամբ հայերը ժողովվեցին թեմական դպրոցում խորհրդակցելու այն միջոցների մասին, որոնք անհրաժեշտ են նպատակայարմար են Երևանը խաղաղեցնելու համար։ Նիստը բացեց խաղաղարար յանձնաժողովի անդամ Տ. Տէր-Աւետիքեանը, որը նահանգապետի կողմից յայտնեց, թէ այսուհետև ընդհարումները պէտք է զսպվեն ամենախիստ միջոցներով, որից կը վնասվի թէ սկսողը և թէ դիմադրողը։ Այդ չարիքի առաջն առնելու համար նահանգապետն էլ առաջարկում է միջոցներ ձեռք առնել և յայտնել իրան։

Ժողովը երկարատև վիճաբանութիւններից յետոյ, հետևեալ որոշումը կայացրեց։

«Երևանի հասարակութիւնը յայտնում է, որ ինքը երբէք նախայարձակ չէ եղել, ճարահատված ստիպված է եղել պաշտպանվելու համար դիմել զէնքի։ Մի և նոյն ժամանակ նա հաստատ հաւատացած է, որ միայն խիստ միջոցները, որոնք կառավարութիւնը պատրաստ է գործ դնել յարձակվող կողմի դէմ, կարող են վերջ դնել Թուրք-հայկական ընդհարումներին։» Այս մասին յայտնվեց նահանգապետին։

Յ. Վ.

—

Խանքենդ-աւան, 11 յունիսի

Գեներալ Գոլօշչապօվը ամեն ճիգ ու աշխատանք թափում է հաշտեցնելու Ղարաբաղի վիճակի Թուրքերին ու հայերին։ Թուրքերը զանազան պատճառներ յարուցանելով ձգձգում են հաշտութեան խնդիրը։ Աղդամի Թուրքերը խնդիրը ձգում են Շուշի քաղաքի Թուրքերի վրա, իսկ սրանք էլ աղդամեցիների։—Ամսիս 10-ին գեներալը, վերցրած Շուշու հայերին՝ գնաց Աղդամ, բայց սրանք խնդիրը ձգձգելով, առարկել են, որ կը գանք Շուշի և հաշտութեան պայմանը այնտեղ կորոշենք։ Ջհականութիւնը, որով հաշտեցնում են երկու գրգռված ազգերին, դարձեալ խախուտ է, միայն ժամանակաւոր։ Գեներալը մի կողմից շատ է աշխատում հաշտեցնելու Թուրքերին ու հայերին, շատ, անչափ է միջոցներ գործադրում։ Գեներալը Աղդամ գնացած օրը, ամսիս 10-ին, մօտաւորապէս ժամի 1-ին, Խալիֆա լուի, Շրանլուի, Քեօսալարի Թուրքերը միացած, 200 հոգուց աւելի զինված յարձակում գործեցին փոքրիկ հայ Փահլուլ գիւղի վրա։

Փահլուլը Խանքենդի հիւսիս արևմուտքումն է, երեք վերստ հեռու, մի ձորակի մէջ, շրջապատված խիտ անտառներով. ընդամենը 16 տուն են, հարիւրաչափ երկու սեռի անձինք, մեծեր և փոքրեր։ Յարձակումը անսպասելի էր, Թուրքերը շատ ճարպիկաբար ու ծրագրված եղանակով էին եկել յանկարծակի յարձակում գործելու, ամենքին դաշոյնով կոտորելու ու գիւղը կրակելու։ Նրանք գիւղը շրջապատել էին բոլոր կողմերից, կտրելով յայտնի ճանապարհները, որպէս զի դրսից օգնութիւն չը կարողանար մտնել գիւղը։

Համազարկերի ձայնը որոտում էր Խանքենդում։ Կանայք, երեխաներ, վայնասուն բարձրացրին, կարծելով թէ յարձակումը Խանքենդու վրա է, որովհետև շարունակ սպառնալիքներ են ուղարկվում մեզ։ Մարդիկ դուրս եկան գիտելու յարձակումը։ Օգնութեան գնացողները մի ակնթարթում պատրաստվեցան, որը զէնքով, որը առանց զէնքի. (մեզ զինաթափ արին և խլեցին 50-աչափ հրացաններ). մարդիկ ուղարկվեցան շրջակայ գիւղօրայքը յայտնելու յարձակումը, քահանան մի քանի մարդկանցով վազեց զօրքերի հրամանատարի մօտ, օգնութիւն խնդրելու, որ և ուղարկվեց։

Օգնութեան գնացող հայերը, որոնք ձիով էին՝ արագ գնացին և դժուարութեամբ պատռելով պաշարման գիծը՝ մտան գիւղը, խրախուսելով գիւղացիներին դիմադրելու, որքան որ հնարաւոր է, մինչև օգնութիւն կը հասնի իրանց։

Համազարկի ձայնը քանի գնում, աւելի սաստկանում էր։ Վերջապէս շրջակայ գիւղացիների կողմից օգնութիւնը հասաւ. Թնդում էին ձորերը, լեռները նրանց ձայներից. «Արա վախիլ մեք, եկանք հա, վախիլ մեք, պինդ կացէք»։ Չէ, Թուրքերը տեսան, որ այլևս աջողութեան բաղդը թեքվում է, ձայն տուին իրանց մարդկանցը՝ «էրմանլար գալդիլար», (հայերը եկան) սկսեցին փախուստի դիմել։ Որքան հայերը աշխատեցին դրանց առաջը կտրել և մի օրինաւոր դաս տալ, բայց անտառները և վրա հասնող ամպերը—մշուշը խանգարեցին։ Փահլուլեցիներից տարված են 2 անասնապահ իրանց անասուններով, մնացածն ողջ և առողջ են։

Մինչև որ կօզակները փողերը կը փչէին ժողովելու կօզակներին, ձիերը կը թամբէին ու կը ճանապարհէին, տեւեց գրեթէ մի ժամ, այնպէս որ նրանց գիւղը հասած ժամանակ՝ արդէն ամեն բան դադարած էր։ Գովասանքի արժանի է և Եկատերինօդարսկիյ գնդի մի հարիւրապետի արածը։ Նա տեսաւ, որ Վօլժսկի կօզակներից միայն 50 հոգի գնաց, իսկոյն հրաման արձակեց 50 հոգի էլ իր խմբից պատրաստելու և նրանց գլուխն անցնելով կայծակի արագութեամբ մինչև Վօլժսկի կօզակների գիւղը հասնելը, եռաներից հասաւ։ Սա գիւղացիներին քրիստոնէաբար խրախուսել է, երբէք չը վհատվել, արի լինել և անասունները տեսնելով. ասել է. աւելորդ էք պահում, ո՞վ գիտէ, ո՞վ կուտէ, ծախեցէք և ձեզ պաշտպանելու խնդրի համար գործադրեցէք…

Զօրքը վերադարձաւ, իսկ մինչև զօրքի գիւղը հասնելը՝ քաշվել հեռացել էին և հայ օգնութեան եկողները։

Փահլուլեցիների ուրախութեանը չափ չէ եղել, երբ իրանց ծանր բօպէների մէջ իրանց օգնութիւն է հասել։ Մի հինգ բօպէ էլ անցնէր, արդէն յուսահատութիւնը մեզ պէտք է կլանէր մտնելով գիւղը հրդեհի և թալանի, բայց օգնութիւնը մեզ քաջալերեց և խրախուսեց մեզ, որ մենք մենակ չենք, ասում էին սրանք։ Խեղճերը ունեցել են մի 10 հրացան, որից 3-ը անպէտքացել է 10—15 անգամ արձակելուց յետոյ և նրանք 7 հրացանով մինչև օգնութեան գնալը՝ բաւական դէմ են կանգնել։ Խրախուսանքի արժանի են և խանքենդցիներից 2 հոգի. նրանք երկուսը մի կողմը դրած, գնդակների տարափի տակ, պատռելով պաշարման գիծը, մտել են գիւղը՝ քաջալերելու գիւղացիներին։ Աւելի բնորոշ է երրորդ խանքենդցու արածը, որ հայը վախկոտ չէ։ Սա առըճանակը (մի յիմար բան) ձեռքին վազելով անցնում էր մարդկանց միջից Փահլուլ գիւղը գնալու. Քահանան բարկացաւ և հրամայեց նրան բռնել։ Բռնեցին։ Այդ ուր ես գնում, հարցրեց։ Գնում եմ Փահլուլ, օգնելու իմ եղբայրներին։ Բայց ինչով ես գնում, հրացան չունես։ Առըճանակն էլ բաւական է, ասելով խոյս տալով փախաւ գնաց։ Կռիւը դադարելուց յետոյ գնդվեցին Թուրքերի դիրքերը։ Բոլորը գիլզաներ են եղել Մօսինի, Մաուզէրի և Բուրսկի հրացանների։ Նրանք շատ լաւ պատրաստ են։

***

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

—Կրասնօեարսկի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը յունիսի 9-ին դիմել է ներքին գործոց մինիստրութեանը խնդրելով աւելացնել Կրասնօեարսկի ոստիկանութեան կազմը, աչքի առաջ ունենալով ազգաբնակութեան լարված տրամադրութիւնը։ Գեներալ-նահանգապետի զեկուցման համաձայն, Կրասնօեարսկում վերջին ժամանակներս յայտնվել են ծայրահեղ յեղափոխական կազմակերպութիւնների անդամ ագիտատորներ և եռանդուն գործունէութիւն են ցոյց տալիս։ Ամենայն օր տեղի են ունենում միտինգներ ու ժողովներ ու զանազան տեղերում։ Այնպէս որ ոստիկանութիւնը փաստօրէն անկարող է հսկել այդ բոլորի վրա, իմանալ թէ ո՞րտեղ ինչ է կատարվում։ Սաստիկ պրոպագանդա է արվում զօրքերի մէջ նոյնպէս: Տեղական զօրքերի զօրանոցները մուտք են գործում կողմնակի մարդիկ զինուորական հագուստով, որպէսզի պահապանը չը բռնի: Հէնց իրանք զինուորները ամեն տեսակ խորամանկութիւնների են դիմում կողմնակի մարդկանց մուտքը զօրանոցներում աւելի հնարաւոր ու ապահով դարձնելու համար: Տեղական զօրքերի զինուորները, ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կարծիքով, վերջին ժամանակներս այնքան են յեղափոխուել, որ հազիւ թէ կարելի լինի երաշխաւորել նրանց հնազանդութեան մասին՝ որ եւ է անկարգութիւն ծագելու դէպքում: Զինուորների մէջ խլրտումները աւելի եւս սաստկացան այն դէպքից յետոյ, երբ օֆիցերը վիրաւորեց երկու զինուորի: Այդ պատճառով ոստիկանութեան կազմը աւելացնելը անհրաժեշտ է կարգապահութիւնը եւ հանգստութիւնը ապահովելու համար: Գեներալ-նահանգապետի խնդիրքին ներքին գործերի մինիստրութիւնը յունիսի 9-ին պատասխանել է հետեւեալ լակօնական հեռագրով. «Ձերդ գերազանցութեան խնդիրքը մերժւում է»:

«Дума»

—Պետերբուրգից հաղորդում են «Р. В.»-ին, որ յունիսի 10-ին այնտեղ կայացել է բուլօչնիկ-տէրերի ժողովը, որտեղ վճռել են զիջումներ անել բանւորներին: Գործադուլային կոմիտէտին առաջարկել են հաշտարար դատարան հիմնել բաղկացած 15-ական ընտրեալներից—երկու կողմից: Գործադուլային մասնաժողովը համաձայնութիւն յայտնեց: Առաջին ժողովը պէտք է գումարուէր հէնց այսօր քաղաքային Դումայում, բայց տէրերից քիչ մարդ էր եկել, ուստի յետաձգուեց նիստը երկուշաբթի օր:

ՄԱՄՈՒԼ

Ի՞նչ դեր է կատարում եկեղեցին ներկայ ազատագրական շարժման մէջ—ահա մի հարց, որ լուրջ կերպով զբաղեցնում է ռուսաց հասարակութիւնը եւ մամուլը: Այդ հարցին «Страна» լրագիրը շատ մռայլ պատասխան է տալիս:

«Եկեղեցին, ասում է նա, սեւ—հարիւրակային է: Զուր տեղ են ձգնում եկեղեցու պատուի պաշտպանները, ապացուցանելով, թէ իբր եկեղեցին չէզոք է, իբր նա կանգնած է բոլոր կուսակցութիւններից դուրս եւ բարձր: Դա կատարեալ սուտութիւն է: Գտնվում են, ի հարկէ, բարեմիտ եւ իդէալարար տրամադրուած քահանաներ եւ աստուածաբաններ, եպիսկոպոսներից, որոնք յանդգնում են բարձրացնել իրանց ձայնը քաղաքական բռնակալութեան դէմ, բայց եկեղեցին իր ամբողջութեամբ, իբրեւ հաստատութիւն, մնում է առաջուայ նման նեցուկ ստրկութեան եւ յետամնացութեան: Ուրիշ խօսքերով—նա հանդիսանում է ամենամեծ փոյթի զուտ կուսակցութիւն: Մանաւանդ խայտառակ կերպով արտայայտւում է նրա քաղաքական—սեւ հարիւրակութիւնը, երբ քաղաքականութեան մէջ են մտնում նրա «ոչ-երկրային» իդէալների կարապետները, որպէս թէ «աշխարհից հրաժարուած» հայր—անապատականները: Այդտեղ դուք լաւ նկատում էք, թէ որքան աւելի խոր էք մտնում եկեղեցու մէջ, այնքան աւելի մօտենում էք ոստիկանութեան դեպարտամենտին: Մենք արդէն ծանօթ ենք սեւ—հարիւրակային «ալիլուայաներին» որոնք նոյն դերի մէջ տեսնում ենք եւ ամբողջ վանքեր»:

Եւ լրագիրը պատմում է, թէ ինչպէս Պոչաեվ վանքի կրօնաւորները սկսել են կռւել Դումայի եւ յեղափոխութեան դէմ: Համբարձման տօնի օրը այդ վանքը ուխտի էին եկել մօտ 10,000 գիւղացիներ. վանականները, օգուտ քաղելով այդ ուխտաւորների ցերեկանոց տրամադրութիւնից, պատրաստում են մի ուղերձ Թագաւորի անունով եւ ստորագրել տալիս գիւղացիներին: Այդ ուղերձը խնդրում է Թագաւորից—«խլել Ցարին յանդուգն վիրաւորանք հասցնող Դումայից օրէնսդրական իրաւունքները, թոյլ չը տալ հողերի բռնի գրաւումը, հաւատի ազատութիւնը, ազգութիւնների հաւասարութիւնը եւ ամնիստիան»:

*

Ինչպէս գիտեն ընթերցողները, վերջին ժամանակները կառավարութիւնը մի առանձին եռանդով սկսեց կօնֆիսկացիայի ենթարկել պարբերական մամուլը: Նամանաւանդ խիստ հալածւում եւ կօնֆիսկացիայի են ենթարկւում սօց.-դեմօկրատական թերթերը: Ահա թէ ինչ է ասում այդ առիթով Պետերբուրգում հրատարակվող սօց.-դեմօկրատական «Կուրիէր» թերթը իր № 20-ում.

«Երկու օր իրարու ետեւից կառավարութիւնը սպանում է մեր թերթը, սպանում է ոչ թէ մի որ եւ է առանձին «յանցանքի» համար, այլ թերթի ընդհանուր «ուղղութեան» համար, նրա համար միայն, որ մենք երկրի քաղաքական կեանքը լուսաբանում ենք սօց.-դեմօկրատական տեսակէտով: Այդ պարզ է նրանից, որ գրաքննական վարչութիւնը մինչեւ իսկ չէ կարդում մեր լրագրի այն համարները, որոնց մասին նա կարգադրութիւն է անում կօնֆիսկացիայի ենթարկել: Երկու օր իրարու ետեւից մի ինչ որ չինօվնիկ տպարան է գալիս եւ սպասում է թերթի առաջին օրինակի լոյս տեսնելուն: Ցետոյ նա անհետանում է եւ տասնուհինգ րոպէից յետոյ տպարան են գալիս մի խումբ ոստիկաններ, հետները բերելով թերթը գրաւելու մասին պատրաստի հրամանաթուղթը: Մեքենան կանգնեցնում են եւ կապված կօլօնները, որոնց վրա վտանգաւոր սօց.-դեմօկրատական խօսքն է փորագրված, քանդվում են իշխանութեան ամուր ձեռքերով:

Ի՞նչ է մտածում կառավարութիւնը: Ի՞նչի վրա է նա յոյս դնում: Սպանե՞լ սօց.-դեմօկրատական շարժումը, թէ՞, գուցէ, խեղդել սօց.-դեմօկրատական խօսքը:

Բայց ոստիկանական միջոցներով չէ ընկճւում այնպիսի մի շարժում, որը միլիօնաւոր մարդկանց սօցիալական եւ քաղաքական հաւատոյ հանգանակն է արտայայտում: Չի յաջողվի եւ սօց.-դեմօկրատական խօսքը խեղդել: Նա առաջվան պէս լսելի կը լինի բոլոր ժողովրդական ժողովներում, նա կը հնչէ եւ Դումայի ամբիոնից սօցիալ-դեմօկրատ պատգամաւորների բերանով, եւ մինչեւ իսկ կաշառվող թերթերն էլ ստիպուած կը լինեն այդ ճառերը տպագրել թէկուզ հէնց նրա համար միայն, որպէսզի հինգ կոպէկներ պոկեն այն ընթերցողներից, որոնք ծարաւ են դէպքերի ճշմարիտ, յեղափոխական լուսաբանութիւնը լսելու:

Ոչ մի հալածանք չի սպանի մեր խօսքը: Նա կը հնչէ հրդեհականչ զանգակի նման, նա կը մերկացնէ կառավարութեան յանցանքները, կը զարթեցնէ ժողովրդային մասսաների գիտակցութիւնը:

Եւ եթէ մեզ չի աջողվի թերթի մէջ արձագանք տալ կեանքի բոլոր հարցերին, եթէ մենք ստիպուած կը լինենք ժամանակաւորապէս սահմանափակվել համարեա թէ միմիայն հասարակական ու պրօլետարական շարժումների խրօնիկայով, մենք յոյս ունենք, որ մեր ընթերցող բարեկամը կը հաշտվի իր դասակարգային շահերի պաշտպանութեանը նուիրված թերթի այդ թերութիւնների հետ եւ մեզ կաջակցի այս դժուար կռւի մէջ»:

*

Անշուշտ յիշում են ընթերցողները, որ Պետական Դուման բացվելուն պէս, նախագահի ընտրութիւնից յետոյ, Դումայի բոլոր անդամները մի «հանդիսաւոր խոստմնագիր» ստորագրեցին: Դա մի տեսակ երդում էր, որ ժողովրդի ներկայացուցիչները տալիս էին, Պետական Դումայի համար մշակված կանոններից դուրս չը գալու համար:

Այդ թղթի տակ ստորագրելը, ի հարկէ պարտաւորեցուցիչ է Դումայի բոլոր անդամների համար, այսինքն եւ նրանց համար, որոնք Դումայի բացման օրը ներկայ չէին, այլ հետզհետէ եկան եւ դեռ շարունակում են գալ:

Նոյն «Կուրիէր» թերթում կարդում ենք, որ Կովկասից եկած սօց.-դեմօկրատ պատգամաւորները այդ վերոգրեալ խոստմնաթղթին ստորագրելու մասին հետեւեալ պատճառաբանութիւնն են մտցրել.

«Մենք ստորագրում ենք Դումայի կանօնադրութեամբ մշակված «հանդիսաւոր խոստմնագիրը», որպէսզի հնարաւորութիւն ունենանք կատարելու ժողովրդի մեզ յանձնված գործը եւ, ընդգծում ենք, որ մենք ամեն տեսակ քաղաքական պարտականութիւններ ընդունում ենք միմիայն ժողովրդի վերաբերեալ»:

Շատ պարզ եւ որոշ է, ոչ մի թիւրիմացութիւն չէ կարող լինել:

*

Վանի այժմեան թշուառ վիճակի մասին, դօկտոր Րէյնօլդ հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում, որ քաղում ենք Ամերիկայի «Կոչնակ» լրագրից.

«Վանայ հինգ գաւառները, Պաշգալէ, Նորտուզ, Շատախ, Մոկս եւ Կարկառ, որ կը գրաւեն Վանի արեւելքը, հարաւը եւ հարաւային արեւմուտքը՝ միշտ հաց գնող գաւառներ եղած են: Արճէշ, Էլճէկ եւ գուրսի գաւառներէն ալ Պոլանըխ եղած են Վանայ գլխաւոր շտեմարանները: Ցայտնի է Պոլանըխ ինչ վիճակի մէջ է այժմ, Էլճէկ Բէջօր փաշա փողոցի քրդական ազդեցութեան տակ գրեթէ աւերակ է եղեր: Արճէշ աւելի լաւ վիճակ մը չունի: Երբ նահանգ մը խաղաղութեան ատեն իսկ այնչափ հաց գնող գաւառներ ունի, ներկայ տագնապալից շրջանի մէջ յայտնի է թէ ինչ վիճակի մէջ է: Ինչպէս Հասան փաշան Էլճէկը կաւերէ, նոյնպէս Շէրիֆ պէկ Պաշգալէ Տըրտոսանեան մարդիկ Արճակի կողմեր, քօչարներ եւ Տօրոս լեռնից վրայ տարածուող գաղթական քիւրտ ցեղեր ալ ամայի Նորտուզ, Մոկս, Շատախ եւ Կարկառ: Բէյ չեն ատեն նոր չեն հայ գիւղեր, որոնցմէ ալ բնամուտ չկայ: Միջոց սակաւածանց կամ խառնակ տարիներն՝ մասնաւորապէս հարաւային գաւառներուն հայ բնակիչները, Վան կը խուժեն, ինչպէս դէպքի ալ ատեն ըրին: Ներկայ պարագայ, երբ սովը եւ կոտորածը միայն են արդէն աղքատ ժողովուրդը ջնջելու՝ բնականաբար թշուառներու անգին բազմութիւն մը արդէն կարօտ եւ աղքատ Վան թափուած են, եւ շատեր ալ ճամբաներու բացուելուն կը սպասեն որ լեռներ կիրճեր անցնելով դէպի, վերջին յուսայլքը դիմեն հիւսիսի պէս»:

ԵՐԵՒԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ

Յունիսի 12-ին

«Մենք խոստացել էինք այսուհետեւ հաշտ ապրել հայերի հետ եւ եթէ մինչեւ անգամ նրանք մեզ վնասելու լինեն, մենք պարտաւոր ենք լռել». ահա այս հանդիսաւոր խոստումն էր, որ հաղորդեց «Իրշադը» (Մշակ №120), որը երբեք թէ տուել էր տեղիս Թուրք ազգաբնակութիւնը իրանց ղեկին: Հետեւանքը եղաւ ամսիս 8-ի կոտորածը, որը եկաւ նորէն ապացուցանելու, որ մօտ երկու տարուայ կոտորածներից յետոյ տրուած խոստումները, հանդիսաւոր հաշտութիւններն ու սիրոյ ձեռնտուները պարտադիր են ոչ թէ խաղաղ կեանք, կառավարութեան խախտված միութիւն, անպատսպար կոտորածների, թալան—աւերի ընդմիշտ դադարում, այլ եւ նրանք մի տեսակ զինադադարի դեր են կատարել, նորը սկսելու նոր պատրաստելու, նոր զազանութեամբ ու ճիւաղային ծրագիրներով եւ կրկնվող դէպքերը այդ ցոյց տալով մեզ հասցրին մինչեւ Չաղցին հիւանդութեան «հոգեւորքի սարսափների» մէջ պահելով:

Դեռ չէր ցամաքել մայիսի 27-ի թափված արեան ճահիճը, դեռ արեան հոտը թարմ էր, դեռ չէր սրբուել զոհերից թափված լացն ու արտասուքը, երբ ամսոյս 8-ը եկաւ լրացնելու իր պակասորդը, աւելի ուժգին կերպով մթնոցնելու, եւ արեան գոլով շաղաղցնելու մեր հոգու ապագայ անդորրը եւ, հաստատում ենք այդ մտայնոյթ սեւ օրերին, աչքի առաջ ունենալով տեղի ունեցող բիրտ եւ գռեհկութիւնը եւ դասաւորված տխուր փաստերը:

Ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, մայիսի 27-ի դէպքերից յետոյ Թուրքերը կարել էին իրանց յարաբերութիւնները քաղաքի հետ. փակ էին խանութները, բոյկոտ էր սկսել հայի եւ Թուրքի մէջ, եւ դրա հետ միասին շշնջեցնող լուրեր էին պտտվում քաղաքում նոր յարձակումների մասին կամ հայերի կամ Թուրքերի կողմից: Աւելորդ չենք համարում յիշատակել ուշադրութեան արժանի մի կէտ: Երեւանի գաւառը եւ Թող աւելին ասենք նոյն իսկ նահանգը, իր երկու ազգաբնակութեամբ միշտ նայել են Երեւանի քաղաքին, քաղաքային ընդհարումները ունեցել են իրանց որոշ եւ խիստ ազդեցութիւնը շրջակայքի եւ նահանգի վրայ: Եթէ քաղաքում տեղի ունեցած ընդհարումները վերջացել են յօգուտ Թուրքերի, փաստօրէն ապացուցված է, որ շրջակայ Թուրք ազգաբնակութիւնը բարձրացրել է իր գլուխը յարձակվել ամեն հայերին, իսկ եթէ Թուրք ամբոխն է ճնշվել ու տուժել հայերի կողմից եղած կարուկ ինքնապաշտպանութեան միջոցներով, այն ժամանակ Թուրքերը «խաղաղասէր» են հայերի հետ ու անխիղճ չէյթանին: «Թող աստուած սաղ սալամաթ պահի մեր շհարը (Երեւանը), Թող Աստուած ոյժ ու կարողութիւն տայ շըհարի հայ տղաներին. եթէ շհարը ձեռքից գընաց, այսինքն յաղթվեց, մենք տնով տեղով կորած ենք, մեզ Թուրքերը կը կոտորեն հաւերի պէս»—այս խօսքերն եմ լսել Երեւանի շրջակայ գիւղացիութեան բերնից, երբ խօսք է եղել հայ-Թուրքական ընդհարումների մասին եւ անկասկած այս կէտը աննկատ չէ մնացել Թուրքերի կողմից եւ 27-ի անպատսելի կոտորածը, որ պսակվեց Թուրքերի յաջողութեամբ, ունեցել է իր ազդեցութիւնը գաւառամասի վրա: Հաստատ տեղեկութիւն ունեմ, որ 27-ի դէպքից յետոյ Երեւանի «ջան-բէզարների» ու ագիտատօրների գլխաւորներից երեքը շրջել են շրջակայ Թուրք գիւղերը, խրախուսել ու քաջալերել են Թուրքերին, պատրաստ լինել «յաղթութիւնը մերն է» հեռայոյսով գրգռել են Թուրք մասսային իրանց մէջ բաժանելու Երեւանի շրջակայ հարուստ հայ գիւղերի ցորենի ամբարները, եզն ու գոմէշը եւ գուցէ սիրուն հարսները ու աղջիկերքը...:

Ամսիս 8-ի առաւօտեան ինչ որ անհանգըստութիւն էր նկատվում քաղաքում. զինված Թուրք «ջանբէզարները» մտրակներով շրջում էին շուկայում ու բուլվարում, գցելով խորհրդաւոր ակնարկներ անցուդարձ անող հայերի վրա իրանց արիւնով լիքը աչքերով եւ ահա ժամը մօտ 11-ին արձակում են գնդակները «բախկալխանայից», ընդհատվում է կոտորածը ու սարսափելի փախուստը. բայց այս անգամ Թուրքը յուսախաբվեց, երբ մի քանի զոհերից յետոյ հրապարակ եկաւ զօրքը, որը իր համազարկերով ցրվեց կատաղած Թուրք ամբոխը, կորուստներ հասցնելով գլխաւորապէս Թուրքերին: Թուրքերը արձակել են կոզակների ու սալդաթների վրա, որից զօրքը գրգռված մի քանի զալպերով ծածկել է Թուրքերի մի քանի խանութներ, առանց մարդկային զոհերի: Հայերի վիրաւորներն ու սպանվածները 10-ից աւել չեն. Թուրքերինը անյայտ է. նրանք փախցնում են իրանց զոհերին, հաւանական է որ շատ լինեն: Սպանված են մի քիչ եւ մի հրեայ:

Ուշադրութեան արժանի է այս անգամուայ զօրքի կարուկ միջամտութիւնը, որը եթէ բացակայէր, Երեւանը անասելի սարսափների ու արեան ձեռքի վայր կը դառնար:

Ամսիս 8-ին դադարեց 9-ի վաղ առաւօտեան տեղի ունեցաւ ահեղ ու երկարատեւ հրացանաձգութիւն հայ Թուրքական թաղերից, գլխաւորապէս հինդ քաղաքամասում, արձագանք տալով Շհար ու Դամբրուլաղ թաղերում եւս. այդ հրացանաձգութեան ժամանակ սպանվել են 2 Թուրք հրացանաձիգներ եւ կալանաւորված են մի քանիսը: Առաւօտեան հրացանաձգութիւնը դադարեց եւ համարեա երեկոյեան մօտ ժամը 7-ը խաղաղ անցաւ, չը նայելով հատ հատ գնդակների արձակման: Ժամը 7-ին սկսվեց զորեղ կրակ Թուրքերի կողմից Շհար թաղում, ուր անմիջապէս զօրքը վրա հասնելով, իր անընդհատ համազարկերով սկսեց պատասխանել Թուրքերին եւ ապա գնդակահարել այդ թաղում տեղող քաղաքի յայտնի հարուստ ու գիրք ունեցող Միր-Աբբաս աղայի բնակարանը, որտեղից սկսվում են գնդակի կարկուտներ տեղալ զօրքի վրա: Զօրքը կատաղած ներս է խուժում բնակարանը եւ կոտորում է Միր-Աբբասի սան կան-կարաւուլները: Ասում են, որ փախել են եւ փոխ-նահանգապետի կառքին: Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ այդ հռչակաւոր Միր-Աբբաս աղան Թուրքերի կողմից թեկնածու էր համարվում Պետական Դումային:

Թուրքերը խեղճացրութեան չափ գրգռված են, տեսնելով իրանց պարտօրի անյաջողութիւնը չը նայելով որ ամսի 9-ից յետոյ մի առանձին դէպք տեղի չէ ունեցել:

Առ այժմ քաղաքը հանգիստ է. խանութները փակ. յարաբերութիւնները կարված. հայերի շուկան տեղափոխված է Աստաֆեան փողոցը. լինում է երբեմնակի հրացանաձգութիւն:

Աւելորդ չենք համարում արձանագրել ընդհարումների ժամանակ տեղի ունեցած մի քանի ուշագրաւ դէպքեր: Պատահած մի քանի պարականապատ Թուրքերի, հայերը պաշտպանում ու պատսպարում են, ապա յանձնում են պոլիցիայի միջոցով պարսից հիւպատոսին: Քաղաքի Թուրքերից բանիմաց Հաջի-Բիգա Բեազիմովը կոտորածի ամենաեռանդ ժամանակ պատսպարում ու պաշտպանում է հայր եւ որդի (Ցարութիւն եւ Լեւոն) Թոդեղեանցներին այն րոպէում, երբ նրանք իրանց բաժակի առաջ զրաված են եղել քաղաքի վտանգաւոր տեղում, Նախիր քարվանսարայում, որտեղ նրանք կարող էին ոչ գնալ, եթէ յիշեալ Հաջի-Բիգան չը պաշտպանէր նրանց եւ ընդհարումը դադարելուց յետոյ ապահով ճանապարհ չը դնէր տուն:

Այս դէպքերը որքան ուրախալի են, նոյնքան եւ ապացուցանում են, որ երկու ազգութեան խեղճեա ու բանիմաց մասը համար միանգամայն ցանկալի չեն անմիտ ու անմեղ կոտորածները: Բայց արդեօք շատ կը գտնուեն այդպիսի անձնաւորութիւններ:

Քաղաքը պատարկված է ազգայնականութիւնից. նրանք փախչում են. գործիչները վտանգաւոր է. քնում ենք անհանգիստ. ցերեկը սարսափի ու վտանգի մէջ ենք. հակամիտ ենք կարծելու, որ տեղի կունենան աւելի կորստաբեր ընդհարումներ, եթէ կառավարութեան կողմից ձեռք չառնվեն կարուկ ու վճռական միջոցներ:

Սուրմալուից հանգստացուցիչ լուրեր ենք ստանում:

Ռ. Պօղոսեանց

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

I Նիստ

Հինգշաբթի, առաւօտեան ժամի 10-ին, Ցօֆմանեան դպրոցի սրահում տեղի ունեցաւ ուսուցչական համաժողովի առաջին նիստը:

Պէտք է անմիջապէս ասեմ, որ այդ նիստը ներկաներից եթէ ոչ բոլորի՝ գոնէ շատերի վրա թողեց ողբալի տպաւորութիւն, իր շփոթով եւ իր արդիւնքով:

Կարծէք, դուք հանդիսատես էիք լինում ոչ թէ ինտելիգենտ մարդկանց մի խորհրդակցութեան, այլ մտածելու, դատելու, սառն կերպով տրամաբանելու անսովոր ու անընդունակ մարդկանց մի համախմբումին, որոնք միմեանց հարցապնդում են, միմեանց կշտամբում, հարցապնդում, կշտամբում, վիրաւորում նոյնիսկ ժողովի նախագահին, որը վհատած, անճրկած՝ ուրիշ ելք չէ գտնում, բայց եթէ վերցնել իր գնակը սեղանի վրայից եւ հեռանալ սրահից:

Մի խօսքով՝ դա ուսուցիչների համաժողով չէր, այլ աւելի շուտ մի միտինգ, մի ալեկոծ միտինգ հակառակ ձգտումների, հակառակ գաղափարների, հակառակ շահերի տէր անձանց, որոնք իրար չեն հասկանում, չեն կարող հասկանալ:

Ժամը ճիշտ 10 էր, երբ Արսէն քահ. Բագրատունին բարձրացաւ նախագահական ամբիոնը՝ բարի գալուստ մաղթելու ներկայ ուսուցիչներին, եւ աջողութիւն՝ նրանց աշխատանքներին:

Այնուհետեւ միութեան բիւրօյի քարտուղար պ. Աւագեան համառօտ կերպով ընդգծեց Միութեան ծագման պատմութիւնը, թէ ինչպէս նա առաջին անգամ նիստ ունեցաւ Վիկտորիա հիւրանոցում, յետոյ երկրորդ անգամ Ցովնանեան դպրոցում եւ մշակեց «ռուսահայ դպրոցների ուսուցիչների եւ ուսուցչուհիների Միութեան կանօնագրի մի նախագիծ», որը քննելու, բարեփոխելու եւ վաւերացնելու կոչված էր ներկայ համաժողովը:

Միութեան նպատակն էր հայ ուսուցչութեան նիւթական եւ բարոյական կացութեան բարելաւումը. նրա գործունէութեան գլխաւոր առարկաներից մէկը պիտի լինէր միջնորդ հանդիսանալ հոգաբարձութիւնների եւ ուսուցիչների միջեւ, բաւարարութիւն տալ երկու շահագրգռված կողմերի պահանջման ու մատուցման խնդիրներին:

Միութիւնը՝ կարճ, պրօֆեսիօնալ մի ընկերակցութիւն էր:

Քարտուղարի զեկուցումից երեւաց, որ բիւրօն այդ ուղղութեամբ ունեցել է գործունէութեան մի սկիզբ, նա մատակարարել է ուսուցիչներ՝ խնդրամատոյց հոգաբարձութիւնների, բայց մեր դժբաղդ իրականութիւնը, հայ-Թուրքական եղբայրասպան ընդհարումը, ստիպել է նրան խելոյն վերջ դնել առժամապէս իր գործունէութեանը:

Մենք հաճութեամբ լսեցինք, որ Միութիւնը իր անդամներին աջակցել է ոչ միայն բարոյապէս, այլ եւ մի քանի կարօտ ուսուցիչների՝ նաեւ նիւթապէս:

Այդ զեկուցումից յետոյ, որը հազիւ 10 րոպէ տեւեց, սկսվեց աղմուկի, շփոթի, անմտութիւնների կծիկը:

Պէտք էր ընտրել ժողովի մի վարիչ, մի նախագահ, եւ, ի հարկէ, նրա օգնական եւ քարտուղարներ:

Անկասկած դուք բոլորդ սպասում էք, որ ձեզ ասեմ, թէ ժողովը՝ նկատի ունենալով գործի լրջութիւնը, մանաւանդ այն, որ նախագահը չէ ընտրվելու մի նիստի, մի ժամվայ, մի օրվայ, այլ մի շարք նիստերի, մի քանի օրերի համար—կանոնաւոր, գաղտնի քուէարկութեամբ որոշեց իր նախագահին ու քարտուղարները:

Այդպէս չեղաւ սակայն:

Մի քանի ձայներ, մի քանի անուններ նետվեցին մէջտեղ, որոնցից համեմատաբար աւելի յաճախ կրկնվեց անունը՝ Յով. Տէր-Միրաքեան, եկաւ գրաւեց նախագահական աթոռը:

Պ. նախագահը դեռ իր աթոռի վրա չէր նստած, երբ ժողովականների մի մասը յանկարծ խոր քնից սթափուածի նման, սկսեց պահանջել, որ նախագահի ընտրութիւնը կատարվի, աւելի լրջութեամբ, գաղտնի քուէով:

Ներկայացրէք խեղճ պ. Տէր-Միրաքեանի դրութիւնը: Մի երկու յաւերժացող րոպէների ընթացքում վարանման մէջ նա մնաց, թէ ինչ պէտք է անէ արդեօք. լսէ նրանց, որոնք պնդում էին, որ նա առժամապէս վարէ ժողովը, մինչեւ կարողվի թէ ո՞վքեր համաժողովին վճռական ձայնով մասնակցելու իրաւունք ունին,—եւ հետո նախագահական աթոռի վրա, թէ նրանց, միմեանամիջութեան, որ պահանջում էին, մի քիչ ուշ. ընտրել նախագահ օրինաւոր քուէարկութեամբ,—հիւանդոտ ամբիոնից:

Վերջապէս, պ. Տէր-Միրաքեան հակառակ իր ցանկութեան գաղտնի քուէներով նշանակված մի նախագահի աթոռում բազմելու, զիջելով առաջինների թախանձանքին, հաստատվեց իր պաշտօնում:

Եւ, համաժողովի չար աստղը, որոշել թէ ո՞րոնք վճռական ձայնի իրաւունք ունեն, պլատոյ եւ իր անհեքի տակ պահեց ամբողջ առաջին նիստը եւ բոլոր՝ տառապէս յուսահատութեան մատնած՝ ժողովականներին, ժամը 10½-ից մինչեւ 3-ը:

Ո՞ւմ տալ ձայնի իրաւունք: Ոմանք ասում էին. անխտիր բոլոր նրանց, որոնք կրել են, կրում են եւ կրելու են իրանց վրա ուսուցչի կոչումը: Իսկ ուրիշներ ասում էին. տալ վճռական ձայնի իրաւունք միմիայն նախկին ուսուցիչներին եւ այժմեան ուսուցիչներին, զրկել ձայնից նրանց, որոնք նոր են մտնում այդ ասպարէզը:

Այս հարցը, որ ոչինչ չունի իր մէջ խրթին, եւ որը կարելի է, համարձակվում ենք կարծել, առ առաւելն մի ժամվայ, 60 անհատնում րոպէների մէջ վճռել, արտասովոր աւելի կամ պակաս յաղթող ճառեր, այդ պարզ հարցը, ասում ենք, մեր ուսուցչական համաժողովը ճշմարիտ հնարագիտութիւնը, ապշեցուցիչ տաղանդ ունեցաւ բարդացնելու, խճճելու, եւ խճճելու այնպէս, որ այնուհետեւ տասնեակներով բարձրացրած հոգիները, իրանց գլուխները ջարդելով եւ գործել չը կարողացան մի վճիռ դուրս բերել, մի վճիռ, որը, եթէ ոչ համոզեցուցիչ ու բաւարար, գոնէ իր օրինականութեամբ անվիճելի եւ հարկեցուցիչ լինէր բոլորի, նոյնքան՝ նոյն իսկ մեծամասնութեան համար: Պ. Քալանթարը, որ եկել էր «Մշակի» կողմից ողջունելու համաժողովը եւ ցանկութիւն յայտնելու, որ միութիւնը պաշտպանէ եւ բարձր բռնէ ուսուցիչների ոչ միայն նիւթական շահերը, այլ եւ մանաւանդ նրանց արժանապատուութիւնը, նրանց կորպորացիայի վարկն ու արժանաւորութիւնը, որովհետեւ ուսուցիչները լինելով բարձր կաթեգորիայի արհեստաւորներ, մտքի արհեստաւորներ, ամենից աւելի շահագրգռված են իրանց արժանաւորութեան գիրացման պաշտպանութեամբ, կարծես նախազգացաւ այն տաժանելի զգայութիւնը, որ բաժին պէտք է ընկնէր համաժողովի իւրաքանչիւր գիտակից անդամի, բարեհաղթութիւնն ունեցաւ, շտապելով իր պարտքը կատարել, հեռանալու Ցօֆմանեան դպրոցից:

Այնուհետեւ, ինչպէս ասացի, 4½ ժամ շարունակ ճառախօսները ծեծեցին միեւնոյն ջուրը: Եկաւ մի րոպէ, երբ էլ ո՛չ ոք՝ ո՛չ ոքի չէր հասկանում: Աջում խօսում էր մէկը, ձախում՝ բղաւում՝ մի ուրիշը. մի ժողովական նախագահին խորհուրդ էր տալիս նստած խօսել, մի այլ «մատաղ մաքի դաշտերը հերկող», հերկում էր նախագահի եւ մեր դժբաղդ ուղեղները անդադար զանգահարելով, որ իրան ձայն չէ տրվում:

Իսկ նախագահը, յոգնած, գլուխը կորցրած, փոխանակ օգնելու իր առաջ պառկող զանգակից, իր ձայնի աջակցութեան էր դիմում շփոթն ու ժխորը աւելացնելով: Ժողովականներից մէկի անտեղի միջամտութիւնը այն աւելորդ կաթիլն եղաւ, որ յորդեցրեց ջղագրգռված նախագահի համբերութեան լիքը բաժակը, եւ մէկ էլ տեսանք, որ պ. Տէր-Միրաքեան խռովեց, խլեց գլխարկը եւ սլացաւ սրահից դուրս:

Հանդիսականների մեծ մասը, այդպիսի ժողովի այդպիսի բնական վախճանից գոհ ու իսկապէս սփոփված, երկար ժամանակ ուսումնարաններում պահված աշակերտների անհամբեր փութկոտութեամբ վազեց դէպի սանդուխները եւ բաւական հոգի հեռացել էին արդէն, երբ մի քանի ժողովականներ շտապեցին սրդողած նախագահի մօտ, եւ բերին նրան իր աթոռը:

Երկար ու ծամծմված ճառերի անձրեւից յետոյ, սկսեց բանաձեւերի անձրեւը:

Ուսուցիչների մի որոշ դաս, հիացում պատճառելու աստիճան յամառութեամբ պահանջում էր ուսուցչութեան ասպարէզի նորընծաներին զրկել վճռական ձայնից: Այս վերջինները քաջ ապացուցում էին, որ իրանք դպրոցական գործին աւելի մօտ են, քան այն յարգելի «մատաղ սերնդի դաստիարակները», որոնք տասնեակ տարի է ինչ թողել են այդ ասպարէզը, մտել առեւտրական գործերի մէջ, իրանց համար ստեղծել փոքրիկ բուրժուաների ինքնագոհ դիրքեր, որ վերջապէս անարդար է իրանց վզին փաթթել մի կանօնադրութիւն, որին՝ գուցէ, եւ ապահովաբար, ենթարկվելու կարիք ու ցանկութիւն չը պիտի զգան այդ երջանիկ ex-ուսուցիչները: Բայց, այժմ աւելի քան երբեք տեղն է ասել. ձայն բարբառոյ ուսուցչական... անապատի:

Տիրող ներվային իրարանցման մէջ ժողովքի ամոքական, անխուսափելի եւ ծանրակշիռ դարձը՝ պ. Արամեանեան, իր գլխին հաւաքած ուսուցչացուներին, նախագահի ինքնակոչ օգնական էր հանդիսանում, գաղտնի յորդորներ կարդալով նրանց, մինչեւ մէկը արդէն ճառում էր... Վերջապէս ընդունվեցին հետեւեալ որոշումները. տալ վճռական ձայնի իրաւունք՝

1) Հայոց դպրոցներում ներկայումս գործող ուսուցիչներին եւ ուսուցչուհիներին:

2) Հայ ուսուցիչներին եւ ուսուցչուհիներին, որոնք գործում են զանազան, կրթականօրէն, քաղաքային՝ կար ու ձեւի դպրոցներում:

3) Նախկին ուսուցիչներին, որոնք գործում են այլ եւ այլ ասպարէզներում:

4) Օտարահպատակ հայ ուսուցիչներին, որոնք գործում են ներկայումս Ռուսաստանի սահմաններում: Զրկել այդ իրաւունքից եւ տալ միայն խորհրդակցական ձայնի իրաւունք՝

5) Ուսուցչացուներին:

Վերջին որոշումը անցաւ 58 ձայնով ընդդէմ 38-ի: Բայց այստեղ զրկվածները նորից ձայն բարձրացրին: Նրանք ասում էին. քուէարկութեան ժամանակ երբ հարցը վերաբերում էր միւս կաթեգորիայի ուսուցիչներին, նրանք իրաւունք ստացան տալ ձայն ի նպաստ իրանց. իսկ երբ հարցը վերաբերում էր մեզ, պահանջվեց, որ մենք ձեռնպահ մնանք, մենք մեզ ձայն չը տանք: Ի՞նչպէս բացատրել այս հանելուկը:

Ժողովականները հանելուկներ բացատրելու ամենեւին տրամադիր չէին երեւում սակայն:

Ապստամբներին լռեցրին:

Նախագահը եւ մի քանի մենաշնորհեալներ հետեւողութիւն պաշտպան՝ պատկառելի ուսուցիչներ, պահանջեցին վճռի անձեռնմխելիութիւնը հոյակապ լրջութեամբ եւ այնպիսի եռանդով, որը եթէ Գորեմիկինին անման մինիստրութիւնը գործ դրած լինէր ռուս քաղաքացիների անձի անձեռնմխելիութեան վերաբերմամբ, Ռուսաստանը կարող էր իրան երջանիկ համարել:

Սակայն, որքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ մի նոր սրահ մտնող ժողովական ձայն խնդրելով սկսեց դիպչել այդ նուիրական անձեռնմխելիութեան:

Հանդիսականներից ոմանք ապշութեամբ նայում էին նախագահի ձեռքին եւ բերանին, որ մէկով կամ միւսով յայտարարէ վերջապէս, թէ ժողովի վճիռները անփոփոխելի են... Նոյն նիստում: Բայց ոչ. նախագահը, միշտ պերճախօս, սկսեց որոտալ ժողովականների անպատշաճութեան, անտրամաբանութեան դէմ—ի փոխանակ բողոքի... քաղաքի ծափահարութեան ծաղկներ:

Ի լրումն այդ բոլորի, անձեռնմխելի հռչակված վճռի վերաքննելիութեան մասին խօսողների մի ցուցակ էլ կազմվեց, բայց ցուցակի մէջ մտածողները էլ չէին ուզում քարոզ լսել...

Տ. Զաւէն

II Նիստ

Երեկ, ամսիս 16-ին, առաւօտեան ժամը 10½-ին Ցօֆմանեան դպրոցի դահլիճում կայացաւ հայ ուսուցչական համաժողովի երկրորդ նիստը, նախագահութեամբ պ. Յ. Տէր-Միրաքեանի:

Ժողովի սկզբում կարդացվեց Վեհափառ Հայրիկի դիւանապետի, բիւրօյի նախագահի անունով ուղարկված հեռագիրը, հետեւեալ բովանդակութեամբ. Վեհափառ Կաթողիկոսը յանձնարարել է ինձ հայոց ուսուցչական համաժողովի բացումը: Նորին Սրբութիւնը օրհնում եւ բարեմաղթում է, որ ուսուցիչների նիւթական պայմանների եւ նրանց բարոյական ու մտաւոր դիրքի բարձրացման գործը աջողութեամբ պսակվի: Պաշտօնակատար դիւանապետ Տաճատ վարդապետ:

Վեհափառ Հայրիկի այս հեռագիրը իբրեւ պատասխան էր ուղղած հայ ուսուցչական Միութեան բիւրօյի նրան ուղարկած այն գրութեան, որով բիւրօն զեկուցել էր Վեհափառ Կաթողիկոսին համաժողովի բացման եւ նրա զբաղմունքների մասին, որից յետոյ խնդրել էր Վեհափառ Հայրիկի օրհնութիւնը:

Հայրապետական հեռագրի ընթերցումը յոտնկայս լսելով հայ ուսուցչական համագումարին մասնակցողները միաձայն որոշում են իբրեւ պատասխան նրան ուղարկել հետեւեալ հեռագիրը.

«Նորին Սրբութիւն ամենայն Հայոց Կաթողիկոսին.

Հայ ուսուցիչների համագումարը, յոտնկայս լսելով Ձերդ Սրբութեան ողջոյնի հեռագիրը, սրանով արտայայտում է իր որդիական անձնուիրութիւնը, որ վերականգնեցիք հայ եկեղեցու եւ դպրոցի ինքնավարութիւնը, եւ յոյս ունի արդարացնել Ձեր յոյսերը, իրագործելով իր վրա ընդունած խնդիրները:»

Դրանից յետոյ համագումարը անցնում է իր հերթական զբաղմունքներին:

Հայ ուսուցչական համագումարի ժամանակաւոր նախագահը շեշտելով այն հանգամանքի վրա, որ համագումարը բաւական գործեր ունի կատարելու եւ անհրաժեշտ է, որ նրա նիստերին ցանկալի կարգապահութիւն պահպանվի, մի առ մի յիշում է համագումարի ամբողջ տեւողութեան օրակարգի գլխաւոր խնդիրները:

Համագումարի զբաղմունքների գլխաւոր առարկաներ պէտք է կազմեն հետեւեալ նիւթերը: Համագումարի նիստերի ժամանակի որոշումը, համագումարի մի նախագահի, երկու փոխ-նախագահների եւ երկու քարտուղարների ընտրութիւնը, համագումարին մասնակցող բոլոր անդամների ձայնատուութեան իրաւունքի որոշումը, ուսուցչական միութեան կանօնադրութեան նախագիծը, ապագայ հայ ուսուցչական միութեան անդամների անդամավճարների գանձումը, եւ միութեան գործադիր մարմինների ընտրութիւնը:

Վերոյիշեալ բոլոր խնդիրները համագումարը որոշելուց յետոյ, պէտք է ծանօթանայ դպրոցական կանօնադրութեան եւ ծրագիրների հետ, որը մօտիկ անցեալում մշակել է անցեալ ուսուցչական ժողովի կողմից ընտրված մասնաժողովը:

Նախագահը համագումարի զբաղմունքների ժամանակի որոշումը առաջարկելով համագումարին, որոշվեց առայժմ նիստերը գումարել օրեկան մի անգամ, առաւօտեան ժամը 9—2-ը:

Համագումարին մասնակցող մօտ 50 հոգի ժողովին առաջարկում են նորից վերաքննութեան ենթարկել ապագայ ուսուցչացուների խնդիրը, որը համագումարի առաջին նիստում բացակայ մօտով էր որոշվել եւ համագումարը ձայնից բազմութեամբ վճռել էր այդպիսի ուսուցչացուներին միմիայն խորհրդակցական ձայնի իրաւունք տալ: Սակայն համագումարին մասնակցող անդամները ձայնից բազմութեամբ որոշում են ամենից առաջ կատարել համագումարի պաշտօնավոր անձանց ընտրութիւնը եւ ապա անցնել այդ խնդրին: Սակայն այստեղ պէտք է նկատել, որ վերոյիշեալ անձանց ընտրութիւնը աւելի օրինաւոր կը համարվէր այն ժամանակ, եթէ համագումարը նորից որոշէր մասնակցող անդամների ձայնատուութեան իրաւունքը, ուշադրութիւն դարձնելով բողոքող անդամների յիսուն պատկառելի թիւի վրա:

Համագումարի պաշտօնավոր անդամների ընտրութիւնը տուեց հետեւեալ արդիւնքը:

Ընտրվեցին նախագահ՝ Յ. Մանանդեան, փոխ-նախագահներ՝ Ին. Յարութիւնեան եւ Յ. Տէր-Միրաքեան: Քարտուղարներ՝ Ա. Աւագեան եւ օր. Մուրադեան:

Լ. Բ.

ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՃԻԳԸ

Այն օրվանից, երբ Պետ. Դումայում սկսեցին ագրարային հարցը քննել, եւ նամանաւանդ երբ այնտեղ հողերը յետ խլելու խնդիրը միահամուռ կերպով պաշտպանվեց, Ռուսաստանի դարերով շինված ու երեւ տեւած հողատէր ազնուականութեան քունն ու անդորրը փախաւ:

Մի քանի անգամ մենք արդէն առիթ ենք ունեցել շեշտելու այն հանգամանքը, որ ներկայ յեղափոխութեան ամենառաջին գործը պէտք է լինի ազնուականութեան հին, ֆէօդալական ժամանակներից մնացած հաշիւները մաքրել: Մինչեւ որ այդ հաշիւները խաղաղ չը մաքրվեն, մինչեւ որ ազնուականներից չը խլվեն նրանց առանձնայատուկ արտօնութիւններն ու բացառիկ իրաւունքները, իրաւունքներ ու արտօնութիւններ, որոնք մնացել են ֆէօդալական ժամանակներից ու շատ սերտ կապ ունեն նոյն ժամանակներում նրանց ձրիաբար բաշխված հողերի հետ, անկարելի կը լինի մեր երկրում լիակատար քաղաքական հաւասարութիւն ստեղծել եւ բոլոր բնակիչներին հաւասարապէս [illegible] անտեսել:

Ազնուականութիւնը, ի հարկէ, շատ լաւ էր հասկանում այդ հանգամանքը եւ իրան սպառնացող վտանգը, բայց եւ այնպէս նա միշտ յոյս ունէր, թէ շնորհիւ իր արիւնակից բիւրոկրատիայի հովանաւորութեան եւ բռնութեան՝ կարելի պէտք է լինի, մի քանի կիսատ պռատ ռեֆօրմներով, հին ռէժիմի վրա կարկատաններ գցելով, խնդիրը անուշի կապել եւ վտանգը հեռացնել, եթէ ոչ ընդ միշտ, գոնէ մի քանի տարով: Ցիշտ այդ է պատճառը, որ յեղափոխական շարժումներ հէնց սկզբից, դեռ Սվետօպոլկ-Միրսկու մինիստրութեան օրով, ազնուականները ժողով գումարեցին Պետերբուրգում եւ պնդեցին ներկայացրին կայսրին, խնդրելով մի քանի անհրաժեշտ ռեֆօրմներ «շնորհել» երկրին, որպէսզի կարելի լինի այդ փշրանքներով բաւարարել ժողովրդային շարժումները եւ դրանց հետ կապված տուալ վտանգի առաջը առնել:

Բայց այն ժամանակ հեռատես ազնուականութեան ձայնը լսող չեղաւ: Ինքնակալական բիւրոկրատիան իր նորպար ազնուականներին վախկոտների տեղ դրեց եւ նշանաւոր յունուարի 9-ից սկսեց իր կործանիչ քաղաքականութիւնը:

Այն օրվանից դէպքերը մտրակի արագութեամբ միմեանց յաջորդեցին եւ յեղափոխութեան ալիքը քանի գնաց աւելի ու աւելի բարձրացաւ, որի ազդեցութեան տակ ազնուականների մի մասը օպոզիցիոն կողմը անցաւ, մնացածները հոկտեմբերի 17-ի կուսակցութեան մէջ, միւս մասը բացարձակապէս խուլիգանական նախկին շարքերի մէջ մտաւ, իսկ մի երրորդ մասն էլ մի կողմ քաշված, գլուխները թափահարող հանդիսատեսներ մնաց:

Բայց ոչ խուլիգանական արշաւանքները, ոչ էլ հոկտեմբերի 17-ի կուսակցութիւնը չը կարողացան սպառնացող վտանգի առաջը առնել:

ժողովրդային ներկայացուցիչների ժողովը իր լուծելիք խնդիրներից ամենաառաջինը ազնուականութեանը տանջող ագրարային հարցը համարեց և ջախջախիչ մեծամասնութեամբ, որի մէջ մտան նոյն իսկ մի քանի խելահաս ազնուականներ,—նման 1789 թ. ֆրանսիական այն ազնուականների, որոնք ինքնայօժար կերպով հրաժարվեցին իրանց հողերից ու արտօնութիւններից,—հողերը յետ խլելու կողմը արտայայտվեցին։

Այս անգամ վտանգը աւելի մօտ և սպառնական էր, և ահա ազնուականութիւնը նորից իրարանցումի մէջ է ընկնում և փորձում է իր վերջին ճիգը թափել, այդ վտանգից մի կերպ ազատվելու համար։

Այդ նպատակով վերջերս ընդհանուր Ռուսաստանի ազնուականութեան համագումար տեղի ունեցաւ, որտեղ յուսահատ ազնուականները որոշեցին, ըստ իրանց հին սովորութեան, դարձեալ կայսրի փէշերից կախ ընկնել ու նրանից օգնութիւն աղերսել։ Չափազանց հետաքրքիր և բնորոշ է այն ուղերձ—աղերսագիրը, որ նրանք մշակել են այդ վերջին համագումարում և կայսրին ուղարկել։ «Սարսափելի չէ,—ասված է այդ ուղերձում,—ռուս ժողովրդի համար (կարդա՝ ազնուականութեան համար) արտաքին թշնամին, այլ սարսափելի է այն թշնամին, որի դէմ երես առ երես այժմ կանգնած է ռուս ժողովուրդը»։ Այդ արտաքին թշնամուց աւելի սարսափելի թշնամիները ազնուականութեան կարծիքով նրանք են, որոնք ցանկանում են ազնուականներից հողերը յետ խլել և գիւղացիներին տալ օգտվելու։ «Ռուսաստանի հազարամեայ պատմութեան մէջ,—ասված է նոյն ուղերձի մէջ,—այսօրվան, գուցէ և ամենադժուարին ժամի ամենագլխաւոր վտանգը ազնուականների հոգատարութեան անհետանալու մէջ է կայանում»։ Սարսափահար եղած ազնուականները, կամենալով անշուշտ սարսափահար անել և կայսրին, ինչպէս նրանք միշտ արել են անցեալում նմանօրինակ վտանգների ժամանակ, ասում են, որ ագրարային ռեֆորմների ձգտողները կայսրի բարձրագոյն իշխանութիւնն էլ են ուզում յափշտակել, միայն թէ նրանք իրանց այդ չար դիտաւորութիւնը զգուշութեամբ դեռ թագցնում են, և որ, գիւղացիներին նոր հողաբաժիններ տալու գլխաւոր նպատակը այն է, որ այդ պարոնները ցանկանում են ամբողջ «հողազուրկ և մուրացկանութեան հասած ժողովրդին (կարդա դարձեալ ազնուականներին) ամենակարող միջազգային կապիտալի գերութեանը մատնել»։

Այս բոլոր աղեկտուր լաց ու կոծից յետոյ, մեծապատիւ ազնուականները սկսում են մի առ մի թուել, թէ ինչ միջոցներով կարելի է ագրարային հարցը լուծել, և նրանք ոչինչ չեն գտնում ասելու, քան այն, որ մի առ մի թւում են այն բոլոր միջոցները, ինչ արդէն մինիստրութիւնը ներկայացրել էր Պետական Դումային և ընդհանուրի ծաղրին ու արհամարհանքին արժանացել։

Ուղերձ-աղերսագրի վերջում ազնուականները հպարտութեամբ յայտարարում են.

«Աշխատաւոր հողատէր ազնուականները (այդպէս են նրանք իրանց անուանում) չեն թողնի իրանց բոյները, թագաւոր, և մինչև վերջ կը տանեն դժուարին կռիւը յեղափոխութեան դէմ։ Այնտեղ, գիւղերում, նա (ազնուականութիւնը) կաշխատի հետզհետէ լուսաւորել գիւղացիների, աշխատանքի ընդհանուր անդաստանում եղող իր այդ եղբայրակիցների, մթագնված ու շլացած գիտակցութիւնը»։

Ինչպէս տեսնում էք, ուղերձի այս վերջին կտորը ամենից մաշալուն է։ Ազնուականները չափազանց սանտիմենտալ են դառել, գիւղացիներին իրանց եղբայրակիցներ են անուանում և խոստանում են նրանց գիտակցութիւնը լուսաւորել (?!)։ Շատ հետաքրքիր է, թէ ինչպէս և ինչով պէտք է նրանք լուսաւորեն։ Արդեօք այնպէս, ինչպէս մինչև այժմ են լուսաւորել։ Օհ, դա շատ անմխիթար բան կը լինի։ Ամբողջ աշխարհին յայտնի է, թէ ինչ եղանակով և ինչ գործիքներով է Ռուսաստանի ազնուականութիւնը դարերի ընթացքում գիւղացիներին լուսաւորել։ Այդ ազնուականութեան իր քնքոյշ «եղբայրակիցների» համար ամեն րոպէ պատրաստ ունեցած ռոզգին նոյնիսկ եւրոպական գրականութեան մէջ հռչակ է ստացել։ Գիւղացիներին լուսաւորելու ուրիշ էլ ինչ միջոց ունեն ազնուականները։ Գուցէ և այն օր օրի վրա աճող կապալավարձերը, որոնց շնորհիւ հարիւր հազարաւոր գիւղացիներ տարին տասներկու ամիս սովի են մատնվում... Ո՞ր աստիճան անամօթ լրբութեան հասած լինելու են մարդիկ, որ դեռ յանդգնութիւն ունենան այդպիսի լեզուով խօսելու։ Բոլորովին զարմանալի չէ ուրեմն, որ մի քանի աւելի պատկառանք ունեցող ազնուականներ, որոնց թւում և կոմս Ուվարովը, չը կարողանալով տանել համագումարի վերջին ծայր հասած մթնոլորտը, թողել հեռացել են ժողովից, յայտարարելով, որ ազնուականների մեծամասնութիւնից հազիւ թէ կարելի լինի մի որ և է օգուտ սպասել ոչ միայն պետութեան համար, այլ և նոյնիսկ ազնուական դասի համար։

Խ.—Ազատ

ԹԻՖԼԻՍԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԲԱՆԱՁԵՒԸ

Թիֆլիս քաղաքի պատուիրակների ժողովը յունիսի 14-ի իր նիստում քննութեան նիւթ դարձնելով ներկայ քաղաքական վիճակը եկաւ հետևեալ եզրակացութեան. 1) Դումայում կարդացած իր յայտարարութեամբ կառավարութիւնը պարզ կերպով ասաց. քանի որ կառավարութեան ղեկը գտնվում է իր ձեռքում, ժողովրդական պահանջները կը մնան անիրագործելի և չեն տասնիլ ոչ ազատութիւն, ոչ հող և ոչ էլ ամնիստիա։ 2) Կառավարութիւնը, պահպանելով ամեն տեսակ բացառիկ օրէնքներ՝ զինուորական դատարաններ, մահուան պատիժներ, պատժիչ զօրախմբեր, ջարդեր կազմակերպելով։ Խօսքի, մամուլի, ժողովների և միութիւնների ազատութիւնները խախտելով, ցոյց է ուզում տալ, որ նա յենվում է միայն սուինների ույժի վրա, հակառակ հոկտեմբերի 17-ի մանիֆեստի խոստումներին, և ուզում է կառավարել երկիրը նախկին կամայականութեամբ։ Ի նկատի ունենալով որ մենք մաքառում ենք ընդհանուր հիմնադիր ժողով ստանալու համար, որը միայն կը տայ հիմնական օրէնքներ, կապահովէ ազատութիւնը ամբողջ ժողովրդի համար, մենք գտնում ենք, որ ոչ մի իրական քայլ այդ կուսում անկարելի է անել, քանի որ իշխանութիւնը կը գտնվի պալատական ծառաների ձեռքում։ Այդ պատճառով ընդունելով Դուման այն ժամանակ միայն պատկառելի նախաձեռնող ույժ կը հանդիսանայ ընդհանուր հիմնադիր ժողով գումարելու համար, երբ կառավարչական կազմակերպութեանը կը հակադրի ժողովրդական կազմակերպված գիտակից մասսան. մենք պահանջում ենք Պետական Դումայից ձգտել, միջոցներ ձեռք առնել կազմակերպելու ժողովրդական մասսան և այդ նպատակով հիմնել ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրողական հիմունքներով, առանց սեռի խտրութեան, կոմիտէններ ու մասնաժողովներ բանւորական հարցի մասին, պաշտօնեաների ապօրինութիւնները քննելու մասին և այլն։

Եւ յենվելով ժողովրդական կազմակերպված մասսայի ույժի վրա, Դուման պարտաւոր է. 1) ամենահեռանդուն կերպով պահանջել փոխելու ներկայ նշանակովի բիւրոկրատական մինիստրութիւնը Դումայի մեծամասնութեան վստահութիւնը վայելող մինիստրութեամբ։ 2) յայտարարել ներկայ կառավարութիւնը ազգաբնակութեան վստահութիւնից զուրկ և դատի ենթարկել նրան ու իր բոլոր հլու արբանեակներին, իսկ ներկայ կառավարութեան բոլոր գործողութիւնները ճանաչել ազգաբնակութեան համար ոչ պարտադիր և ապօրէն։ Վճռականապէս այդ հողի վրա կանգնելով միայն Դուման կարող կը լինի յուսալ ազգաբնակութեան ընդարձակ խաւերի եռանդուն աջակցութեան ու պաշտպանութեան վրա։ Ողջունել Դումայի ձախակողմեաններին իրանց վճռականութեան համար ընդդէմ հին կառավարութեան, բանւորական խմբակին պաշտպանելու առթիւ։

Այդ բանաձևի վերաբերմամբ ընդունվել է Երզնկեանի ուղղումը. «մասնաւորապէս մենք ողջունում ենք բանւոր խմբակի կոչը ուղղված ամբողջ Ռուսաստանի բանւորութեանը և մատնանշում ենք նրան, որ, Ռուսաստանի գիտակից պրօլէտարիատի հետ սերտ կապ հաստատելու նպատակով, անհրաժեշտ է խիստ դասակարգային քաղաքականութիւն բանեցնել Ռ. Ս. Դ. Բ. Կ. կենտրոնական մարմնի ղեկավարութեամբ և այդ նպատակով ստեղծել Դումայում մի ուրոյն սօցիալ-դէմօկրատական կազմակերպութիւն»։ Ժողովի վերջում ընտրեցին 10 հոգի պատուիրակների բիւրօի թիւը աւելացնելու համար։

ՋԱՐԴԵՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Հոմելից ստացված անհանգստացուցիչ հեռագրերի պատճառով Պետական Դումայի անդամներ Ռօզենբաում և Ժաբինոսկին դիմեցին ներքին գործերի մինիստրին։ Մինիստրը հէնց նրանց ներկայութեամբ պաշտօնական հեռագիր գրեց Մօգիլևի նահանգապետի անունով, որով հարցնում է նրան ճշմարիտ է, արդեօք, հաղորդված փաստը, և, եթէ ուղիղ է, առաջարկում է անմիջապէս հեռացնել կօզակներին Հոմելից։ Մինիստրը խօսակցութեան միջոցին նկատեց, որ նա վերջին օրերս բազմաթիւ վրդովեցուցիչ հեռագիրներ է ստանում։ Իր կարծիքով, այդ հեռագիրները առհասարակ լարված ու ջղային տրամադրութեան հետևանք են, և գուցէ հէնց այս վերջին հեռագիրն էլ դրա արդիւնք է։

Մինիստրին չհասկացին, որ Հոմելի հեռագիրը հաղորդում է իրական փաստի մասին և ոչ թէ ենթադրութեան։ Մինիստրը հաւատացրեց Դումայի անդամներին, որ նա իսկոյն կուղարկէ հեռագիրը և ձեռք կառնէ հարկաւոր միջոցները։ «Р. В.»

—Օդեսսայից հեռագրում են Р. В. լրագրին, որ յունիսի 10-ի գիշերը, երդուեալ հաւատարմատարներից մէկը իր մօտ կանչեց տեղական լրագրի աշխատակցին և սաստիկ յուզված դրութեան մէջ յայտնեց, որ զինուորական դատարանի Նախագահ գեներալ Կարտինօզովսկին, տեղական «ռուսաց ժողովի» կազմակերպողը, կտրուկ կերպով ասաց մի քանի մարդկանց ներկայութեամբ, որ ամենամօտիկ ապագայում Օդեսսայում կարող է պատահել որ ջարդ լինի զինուորների մասնակցութեամբ։ Նա անձամբ երաշխաւորում է 12000 հոգու համար, որոնք պատրաստ են ջարդ սկսելու։ Մի ինչ որ գաղտնի «Ռուսաստանի փրկութեան կուսակցութիւն» այսօր ուղարկել է բոլոր լրագիրների խմբագրութիւններին շարապօվեան պրօվօկատորական տաս րուբլիանոց յօգուտ Բելօստոկի հրէաների։—Կամաւոր նաւատորմի «Нинск. Новъ» շոգենաւի նաւաստիները, որ հրաժարվում էին Սեվաստոպօլ գնալ արտիլլերիայի էշալոն տանելու համար, համաձայնվեցին։ Շոգենաւը ժամի 3-ին ծովը դուրս եկաւ, բայց ճանապարհից վերադարձաւ։

—Կրկնվում անհանգստացուցիչ լուրեր են պտտում ջարդի մասին։ Հրէական պատգամաւորութիւնը խնդրեց գեներալ-նահանգապետին ուշադրութիւն դարձնելու այդ բանի վրա։ Վերջինս մխիթարեց պատգամաւորութեան ասելով, որ թոյլ չի տալ ջարդ տեղի ունենայ։ «Р. В.»

— Կիշինեվից հեռագրում են «Р. В.»-ին, որ մեծ անհանգստութիւն է պատճառել հրէական և հարիւրակային լրագիրների նախկին խմբագիր Բովալկևիչի այնտեղ գալը, որի հետ բանակցութիւն են սկսել հօկտեմբերեանների օրգան «Бессарабецъ»-ի խմբագրութիւնը նրան յանձնելու։ Միաժամանակ Կրուշեվանը և ուրիշները ստորագրութիւն սկսեցին տեղական «Ճշմարիտ ռուս մարդկանց» միութեան անդամների մէջ։ Բելօստոկի ջարդը սարսափահար է արել ժողովրդին։ Լուր է պտտում, որ 400 հոգի ջարդարարներ են արդէն հաւաքվել։ Սպասում են որ յունիսի 15-ին որևէ դժբաղդութիւն կը պատահի։ Պաշարված են հեռագրելու պատգամաւոր Սինցինին։

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, յունիսի 15-ին, հայ դրամ. դերասա. Թիֆլիսում գտնվող խումբը հանդէս եկաւ Հաւլաբարի բեմի վրա Սումբատովի յայտնի «Դաւաճանութիւն» պիէսայով։

«Դաւաճանութիւնը» մէկն է այն պատմական—ակադն համեմատաբար աչքոյ—պիէսաներից, որոնք իրանց մէջ մի քանի «պատահական» յաւելումներ և «յանկարծակի» տեսարաններ ունենալով հանդերձ՝ պակփակում են և հայրենասիրութեան և ազատութեան գործի մի դիւրըմբռնելի և իրական պատմութիւն—թէև համեմված ֆրազօլօգիայով և մեծ չափով նացիօնալիստ գունաւորումներով։ Նա ուժգին տպաւորութիւն է թողնում մանաւանդ գիւղաբարբառ երիտասարդութեան և աւանդապահ կանանց վրա... հէնց իր պատմական լինելով։ Այդ տեսակէտից էլ ողջունում ենք խմբին—և առաւել պարզամիտ և «ազաթասէր» հասարակութեան վրա սրած ազդեցութեան նկատառմամբ, որին սպասում երևացին անվերջ ծափահարութիւնները...

Խումբը, որ դրամատ. ընկերութեան առաւելապէս երիտասարդ ույժերից էր բաղկացած, երևում էր ջանք էր գործադրել կատարելապէս դուրս գալու իր պատասխանատու դերից։

Տպաւորիչ էին պ.պ. Անդրանիկ (Սուլէյման և Անահիտ), Բերայեան (Երէկլէ), Թաշճեան (Սաբբա), տ. Նոնիկեան (Ռոքայա)։ Պ. Ադայեան յոգնել է արդէն իր բազմաչխատ արհեստից։ Նրա խաղի մէջ մի փոքր արհեստականութեան շրջագիծներ և յոգնածութիւն է աչքի զարնում։

Լաւ էին տ. Աղնիւ (Գայեանէ), պ. Նոնիկեան (Գարօ), Ղուշչեան (Բէօս) և այլն։

Մենք չենք կարող մեր անբաւականութիւնը չը յայտնել այն առիթով, որ ինչպէս սիրողների ժամանակ, այնպէս էլ այժմ—այս անպատ օրերում ներկայացումը սկսվում է 9½ ժամին և վերջանում է գիշերվայ 3-ին։ Պէտք է խուսափել այդ անցանկալի և դատապարտելի սովորութիւնից։

Ե.

ՆԱՄԱԿ ՕԼԹԻԻՑ

Բերդուս, յունիսի 4-ին

Մայիսի 28-ին, կիրակի, գիւղս ժամանեց Կարսի վիճակի փոխանորդ Մամբրէ վարդապետ Մելիք-Ադամեան։ Գիւղացի երկսեռ ժողովուրդը գիւղից դուրս դիմաւորեց հայր փոխանորդին։ Նա գիւղ հասնելով ամենից առաջ այցելեց եկեղեցին, ուր աղօթելուց յետոյ գիւղաց ժողովուրդին մի ազդու քարոզով և հասկանալի լեզուով խօսեց գիւղացու և ազգի խոցող վէրքերից։ Քարոզի գլխաւոր նիւթն էր համերաշխութիւն դէպի ծառայողները, ... միմեանց հետ և գիւղական դպրոցների անհրաժեշտ կարիքը մեր տաճկախօս գիւղերում։ Քարոզից վերջը կատարեց մի նոր ստացված խաչվառի ս. Օծման հանդիսաւոր կարգը և օրհնելով ժողովրդին դուրս եկաւ եկեղեցուց և իջևանեց երեցփոխ պ. Գասպէ Մարգարեանի տանը։ Բերդուսի ժողովուրդը, որ 15—16 տարի է չէին տեսել իրանց մօտ գիւղացու վէրքերից խօսող առաջնորդ յաջորդ..., մխիթարված սրտով ցրվեց եկեղեցուց՝ ուրախութեամբ լցված վարդապետի խրատիչ քարոզի ազդեցութեան տակ։ Նոյն օրը ճաշից յետոյ հրաւիրեց իր մօտ մեր գիւղի աշակերտներից (մեծ մասը բացակայ էին) 6—7 հոգի, սկսեց հարց ու փորձ անել կրօնից, հայերէնից, թուաբանութիւնից... երգեցին մի քանի ազգային և ժողովրդական երգեր և հեռացան։ Դարձեալ գիւղացիներին բացատրեց կանոնաւոր դպրոցի կարիքը գիւղում։ Երկուշաբթի ամսիս 29-ին ճանապարհվեց դէպի Օլթիի միւս հայաբնակ գիւղերը. իբր ճանապարհի վրա երևաց Օրդուլի տաճկաբնակ մեծ գիւղը, նա ցանկութիւն յայտնեց տեսնվել թուրք գիւղացիների հետ. այդպէս էլ եղաւ։ Երբ լուր հասաւ գիւղը, որ գալիս է հայոց վարդապետը, տաճիկները դիմաւորեցին մեծ բազմութեամբ, փոխանորդ հայրը ուղղակի գնաց այդ գիւղի աղօթատունը և խօսեց համերաշխութեան մասին, երբ աղօթատնից դուրս եկաւ, թուրքերը իրանց անչափ շնորհակալութիւնը յայտնելով ասացին «որ մենք Օլթիի վիճակի թուրքեր միշտ հայերի հետ խաղաղ ապրել ենք մինչև օրս եղբայրաբար և այդպէս էլ կը շարունակենք. ինչպէս եղել են և այդ կերպ մեր հայրերը և պապերը»։ Օրդուլուց դուրս գալիս շարունակեց իր ճանապարհը դէպի (մօտիկ) միրձաւոր հայաբնակ Կալկոս և Ազարակ գիւղերը։ Այս գաւառակում, բացի Օլթիի աւանից (Օլթի աւանում ապրում են 200 տուն զուտ հայեր) հայաբնակ գիւղերի թիւը ընդամենը եօթն է, իսկ տաճկաբնակ գիւղեր 109-ից աւել. մինչև օրս ոչ մի ընդհարում չէ պատահել, որովհետև այստեղի թուրք տարրը խիստ խաղաղ ժողովուրդ է։ Այդպէս էլ կը շարունակուի, եթէ դրսից կամ տաճկաստանից (տաճ. սահմանը մօտ է) մուտք չը գործեն մեզ մօտ անհանգիստ տարրեր։ Մեզանում ստացվեց վեհափառ կաթողիկոսի կոնդակը։ Օլթիում և բոլոր գիւղերում դրամական նուէրների հանգանակութիւն է լինում աղէտից վնասվածների օգտին։ Բոլոր կենսական մթերքներս թանկ են. արտերը աճում են. անձրևներ գալիս են։

Շաւիղ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Յունիսի 15-ին

Ս. Յովհաննէս Մայր եկեղեցու կալքի և կալուածների հոգաբարձութեան հրաւէրով յունիսի 8-ին, նոյն եկեղեցու գաւթում ժողովի էին կանչել նոյն եկեղեցու ծխականներին՝ խորհրդակցելու դպրոցական և եկեղեցական կարևոր և անյետաձգելի մի քանի հարցերի մասին և 1906 թւի եկեղեցական դրամների նախահաշիւը քննելու։

Յունիսի 8-ին—առաջին ժողովում, ինչպէս միշտ, այս անգամ էլ ծխականները գլացել էին ժողովի գալու, այդ պատճառով ժողովը յետաձգվեց ամսիս 11-ին, կիրակի օրվայ։

Կիրակի. ծխականներից ժողովին ներկայ էին 44 հոգի։ Ժողովականները ժողովի նախագահ ընտրեցին Յովսէփ Մելիք Բէգլարեանին, քարտուղար Աւ. Սահակեանին։ Հոգաբարձութեան դուրս եկած հաշւից երևաց, որ ս. Յովհաննէս եկեղեցին 1906 թւին ունեցել է եկամուտ զանազան աղբիւրներից 5935 ր., իսկ ելք 5935 րուբլի։

Նախահաշւից երևաց, որ հոգաբարձութիւնը մէկ հազար հինգ հարիւր րուբլի տուել է «Կորինապատում» շինութիւններ կառուցանող այն չքաւորներին, որոնք գիւղերից կամ Նորաշէնից գաղթած լինելով ս. Յովհաննէս եկեղեցապատկան հողի վրա տներ են կառուցանում, բայց միջոցներ չունեն տան պանիքը ծածկելու։

Ժողովականները մեծ համակրանքով վերաբերվեցին հոգաբարձուների արած խելացի քայլին, և ի նկատի ունենալով Կորինաշէնում տներ կառուցանողների դժուար կացութիւնը, միաձայն լիազօրութիւն տուեցին հոգաբարձուներին արվող նպաստը 1500-ից հասցնել 2500 րուբլու, հաշւելով որ 1500 գումարը չէ կարող բաւարարութիւն տալ բոլոր կարիքներին։

Այնուհետև ժողովը անցնելով Գանձակի քաղաքային վարչութեանը տուրքով տուած 10 հազար գումարին և ի նկատի ունենալով վարչութիւնից ստացվելիք անհաշտ տոկոսը, որոշեց այդ փողը պահանջել քաղաքային վարչութիւնից և եկեղեցական հին բաղանիքի տեղը քանդել և նոր խանութների ու տների շինութիւններ կառուցանել և սկսել ոչ շուտ գալ յունվարից։

Ապա դառնալով դպրոցական հրատապ հարցին և լսելով հոգաբարձուների կազմած նախահաշիւը, ժողովականները կարևոր գտան այդ հարցի քննութիւնը և խորհրդակցութիւնը յետաձգել մօտ ապագային, աւելի բազմամարդ և Գանձակի բոլոր եկեղեցիների ծխականների մասնակցութեամբ քննելու և վճիռ կայացնելու դպրոցական յոյժ կարևոր և անյետաձգելի հարցը։

Աւ. Սահակեան

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

Յունիսի 10-ին

«Աշխարհում ամեն բան փոխվում է» այսպէս սկսեց մեր նշանակովի Թովմա վարդապետը կիրակի օրը (28 մայիսի) եկեղեցու իր ողջոյնի ճառը, բայց պնդելով, որ ամեն բան փոխվում է, միևնոյն ժամանակ հայր Բաղդասարեանը հաստատեց, որ ինքը փոխված չէ, ինքը նոյնն է, նոյն բռնակալ իշխանաւորը ծխերի վրա վերաբերմամբ, ինչ որ էր տարիներ առաջ և մազաչափ անգամ չէ փոխելու իր նախկին ըէժիմը։

Ապա անցնելով նոյն օրը եկեղեցու բեմից հանդիսաւոր կերպով Ս. քահ. Շաթիրեանի միջնորդով կարդացված և ժողովրդին արդէն բացատրված Նորին Օծութեան մայիսի 10-ի կոնդակին, հայր-սուրբը առաւ իր Վիտտէ-Դուրնովօեան բիւրօկրատի ոգով մեկնութիւնը։ Նա ասաց. «այստեղ մի ինչ որ՞ջ կօնդակ կարդացվեց», ցոյց տալով իր կատարեալ արհամարհանքն ժողովրդին շնորհված սահմանադրութեան և նրա հեղինակ Կաթողիկոսին։

«Թուականն չէ իրաւունք ունենալ»—շարունակեց նա,—«այլ և պէտք է գիտենալ օգտվել նրանից. հայ ժողովուրդը դեռ պատրաստ չէ, ուստի սահմանադրութիւնը ոչ թէ օգուտ, այլ վնաս կը բերէ նրան։ «Այդ ոչ միայն իմ կարծիքով, այլ և շատերի»—ասաց նա մի առանձին շեշտով։

Ապա նա առաջ բերեց այն բարդութիւնները, որ կառաջանան սահմանադրութեան իրագործումից, թէ ժողովրդի, թէ հոգևոր իշխանութեան և թէ կառավարութեան միջև։ Նա խոստացաւ առաջիկայ ծխական ժողովում բացատրել այն. իսկ մինչ այդ՝ նա հրաւիրեց իր մօտ հասարակութեան խորհրդակցելու։

Ի՞նչ է նշանակում այս. արդեօք մի պրօվօկացիա չէ՞, արդեօք սահմանադրութիւնը այդ վեղարաւոր բիւրօկրատները չեն ուզում շինել այն, ինչ որ եղաւ հոկտեմբերի 17-ի մանիֆեստը։

Մեր խորին դժգոհութիւնը և զզուանքն ենք յայտնում Թովմա վարդապետի վերոյիշեալ ոտնձգութիւնների դէմ, և յանձնում հասարակական դատաստանին ի դիմաց մի խումբ ժողովականների։

Աւ. Յովհաննիսեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Փօթի, 2 յունիսի

Փօթիի եկեղեցու հոգաբարձութիւնը յայտնում է իր շնորհակալութիւնը Թիֆլիսի առևտրական բանկի և փոխադարձ ընկերութեան, նոյնպէս և «Ռուս Փիթօեվ առևտրական տանը, որոնք Փօթիի եկեղեցու և ուսումնարանի շինութեան համար հազարական րուբլի։

Հոգաբարձութիւնը յայտնում է առանձնապէս շնորհակալութիւն պ.պ. Միքայէլ Ալիխանովին, Գրիգոր Աղելխանովին և Մելիք-Ազարեանին։

Նախագահ՝ Ա. Այրբէեանց
Գանձապահ՝ Ալխազով

—

«Սրտոմ ես, բամփեմ քեզ»։
Ժող. առ.

15 յունիսի

Երեկվայ № 128 «Մշակում» ես մատնանիշ էի արել «Ալիք» շրջերի մի քանի աչք ծակող հակասութիւնները և անգիտակից վարմունքները։ Այսօր նրանք «Ալիքի» № 41-ում, իրանց տոնը աւելի ևս բարձրացրած, երկու տակ են լինում ինձ մեղադրելու նոյն սուտութեան ու հակասութիւնների մէջ, ինչի մէջ որ ես էին իրանց բռնել։ Սակայն անգիտակցաբար նրանք ինձ մի մեծ ծառայութիւն են անում և հէնց իրանց խայտառակվում իրանց ընթերցողների առաջ։ «Ալիքի» այդ №-ի միևնոյն սիւնակի մէջ քովէ քով բերված են «Մշակի»-ի №№ 123 և 127-ում իմ արտայայտած մտքերը, կամենալով ցոյց տալ, թէ դրանց մէջ հակասութիւններ կան, մինչդեռ փոքր ի շատէ իր սեփական ուղեղով մտածող ընթերցողը իսկոյն կը նկատի, որ դրանց մէջ ոչ միայն հակասութիւններ չը կան, այլ և նրանք միմեանց լրացնում են։ Եթէ կուզէք, այդ բերված երկու կտորների միջև էք մի որովհետև բառը և նրանք կը կարդացվեն միմեանց յետևից, առանց նրանց մտքի ներդաշնակութիւնը խանգարվելու։

Եւ յիրաւի, եթէ ասում եմ, որ հայ-թուրքական եղբայրասպանութիւնների ամենամեծ և գուցէ միակ հեղինակը կառավարութիւնն է, մինչ դա հերքում է այն միտքը, թէ կառավարութեան պրօվօկացիայի համար թէ թուրք և թէ հայ մութ, խաւար տարրերը կարգ են, բոլորովին անգիտակցաբար և նոյնիսկ հակառակ իրանց կամքի, գործիքներ մատակարարել։ Եթէ ասում եմ, թէ միակողմանի, կրքոտ և շովինիստական ոգով ճառեր արտասանելը միշտ կարող է մտքերը գրգռել ու վառ պահել երկու ժողովուրդների մէջ եղբայրասպանութեան հուրը, մինչ դա հերքում է այն միտքը, թէ թուրք և հայ մամուլը, (իսկ «Ալիքը» անխղճաբար թէ նախորդ և այս նոյն յօդուածում, բիչ վերև պնդում է, թէ ես միմիայն հայ մամուլի մասին եմ խօսել) միակողմանի կերպով արձանագրելով տխուր դէպքերը, կարող են ոչ ցանկալի դեր կատարած լինել։

Յետոյ «Ալիքը» պնդում է, թէ ես յիշեալ ժողովում խօսել եմ իբրև մամուլի ներկայացուցիչ, ասելով, որ այլապէս ես ձայնի իրաւունք չէի կարող ունենալ։ Այդ էլ սուտ է, պարոններ, որովհետև ինձանից զատ նոյն խնդրի առիթով խօսեցին և Տէր Պետրոսեան քահանան և այլ մի պարոն ձեր ծխականներից, որոնք ոչ մամուլի ներկայացուցիչ էին և ոչ պատգամաւորներ։

Ուրիշի մտքերը կրկնելու մէջ էք մեղադրում ինձ!? Ո՞րչափ ծիծաղելի էք...

Ռ. Խան-Ազատեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» հետևեալ համարը Գրիգոր Լուսաւորչի տօնի պատճառով լոյս կը տեսնի երեքշաբթի յունիսի 20-ին։

—

Կովկասի փոխարքան կարգադրեց, որ այսուհետև զօրքը այլ ևս չը խուզարկէ ժողովրդին գանձարանում, պօստ-հեռագրական գրասենեակում և ուրիշ նման կառավարչական հիմնարկութիւններում մէջ։ Զինուորները և ոստիկանները իրաւունք ունեն խուզարկելու ժողովրդին միայն փողոցներում, իսկ վերոյիշեալ հիմնարկութիւններում նրանք իրաւունք չունեն։

—

Սա.-սեկրետար Է. Իւ. Նօլդէն մտադիր է մօտ մի շաբաթ մնալ Թիֆլիսում։ Նա եռանդուն կերպով ծանօթանում է Կովկասի բարձր իշխանութեան վերջին կարգադրութիւնների հետ։ Պետական Դումայի կողմից Կովկասի գործերի վերաբերմամբ առաջարկած հարցերին, ինչպէս լուր է տարածվել, պատասխաններ տալու է, Փոխարքայի յանձնարարութեամբ, պ. Նօլդէն։ (Гв.)

—

Երևանի նահանգապետը հաղորդում է, որ շնորհիւ խաղաղարար մասնաժողովի անկեղծ մասնակցութեան, Սուրմալուի գաւառում հանգստութիւնը վերականգնվել է, ինչպէս և առուգին ջրից օգտվելը։ (К.)

—

Թիֆլիսի ոստիկանապետը չի թոյլատրել անգործ ինտելիգենտներին ժողով գումարելու։ Այդ ի նկատի ունենալով Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար Վ. Ն. Չերքեզովը յայտնեց անգործների միութեանը, որ առանց գին. նահանգապետի թոյլտուութեան նա չի կարող ժողովի համար դահլիճը տալ նրանց տրամադրութեան տակ։

—

Յունիսի 15-ին կայացաւ Թիֆլիսի նահանգական ազնուականների կրթական նպաստամատոյց ժողովը։ Վերջին ժողովը նուիրված էր պաշտօնատար անձանց ընտրութիւններին։ Ընտրվեցին մասնաժողովի նախագահ իշ. Պ. Գ. Թումանեան, նրան օգնական Եա. Ս. Գուլաձէ, անդամներ Ն. Զ. Ցխեթաձէ, Վ. Ի. Րուխլաձէ, Վ. Մուսխելիշվիլի, Ա. Վ. Մդիվանի և Օ. Գ. Ջաքարդարի։ Այդ միևնոյն ժողովում ընտրվեց մի յանձնաժողով, որ պէտք է մտնի մանկավարժական խորհրդի մէջ, որի անդամներ ընտրվեցին Պ. Ա. Գոտուա, Ե. Ս. Գօգեբաշվիլի, Ալ. Միրզանաշվիլի, Խրամելաշվիլի, Վիրսալաձէ, Րուխիլաձէ, Լասխիշվիլի և Սիգօմօնով-Երիստով։

—

Յունիսի 12-ին Թիֆլիսի գաւառի Սարթաչալայի մասում «Սալմիանա» վայրում երկու զինված թուրքեր յարձակվել են 17-րդ Գրենադերեան Թիֆլիսեան գնդի խառատների պահապանի վրա ալբունի հրացանը նրանից խլելու նպատակով, բայց յարձակումը յետ մղվեց, որից յետոյ չարագործները անյայտացան։

—

Շուշեցի Մ. Շահ-Մուրադեանը, որը բնակվում է Մեծ-Վանքսկի փողոցի, վրա մի քանի անանուն նամակներ ստացաւ, որով պահանջում էին նրանից 400 րուբլի։ Շնորհիւ ձեռք առնված միջոցների, անանուն նամակների հեղինակին յունիսի 12-ին աջողվեց ձերբակալել։ Ձերբակալվածը իրան անուանեց պահեստի ունտ.-օֆիցեր Թոմա Ցուխիշվիլի։

—

Վլադիկավկազից հաղորդում են «Տրոմա» լրագրին հետևեալը. «Մի քանի օր սրանից առաջ այստեղ գտնվող թնդանօթաձիգ մի քանի բատարէաներ մի քանի պահանջներ արին իրանց իշխանութիւնից։ Զինուորները, ի միջի այլոց, պահանջում էին, որ կառավարութիւնը չարձակէ Պետական Դուման, մինիստրութիւնը կազմվի Պետական Դումայի անդամներից, ագրարային հարցերը վճռվին Դումայի ցանկութեան համաձայն և այլն։ Վլադիկավկազում զանազան տեղերից զօրքեր են գալիս. մի քանի բատարէաներ կարգադրութիւն ստացան տեղափոխվելու զանազան քաղաքներ։ Ամբողջ Վլադիկավկազում և Թերեքի շրջաններում ժողովուրդը սպասողական վիճակի մէջ է գտնվում։

—

Ճիաթուրայում գործադուլը շարունակվում է։

—

Ինչպէս հաղորդում են «Гвоздь» լրագրին, ներկայումս գին. Ալիխանովը առողջանում է ստացած վէրքերից. Նա արձակուրդ ստացաւ և գնում է իր հայրենիքը—Դաղստան, իսկ աշնանը կը գնայ Կովկասի կուրօրտներից մէկը։

—

Կովկասի զինուորական դատարանը երէկ քննեց Արէշի գաւառում թուրքերից վիրաւորված և ապա այդ վէրքից մեռած Աղասաբեանի սպանութեան գործը, որի մէջ մեղադրվում էին 5 թուրքեր։ Դատարանը դատապարտեց մեղադրվողներից երկուսին մահվան պատժի կախաղանի միջոցով և երեքին արդարացրեց։

—

Մեզ հաղորդում են, որ Ախալցխայի յաջորդը, Գօրու յաջորդը և Թիֆլիսի կօնսիստօրիայի անդամները մատուցել են իրանց հրաժարականը Թիֆլիսի թեմական առաջնորդին։

—

Դաղստանի շրջանի զինուորական նահանգապետը Թեմիր-Խան-Շուրայից հեռագրում է Փոխարքայի վարչութեանը. «Յունիսի 10-ին, գիշերը, աւազակները գերի են վերցրել տեղացի Աշուրօվին»։

—

Յունիսի 15-ի առաւօտեան ժամը 10-ին Բաթումում, երբ Պետերբուրգսկի փողոցով անցնում էր 2-րդ պլաստունի բատալիօնի հարիւրապետ Ալէքսանդր Կիսլիցկին, յանկարծ մէկը նրա վրա ատրճանակ արձակեց և սպանեց Կիսլիցկուն։ Յանցաւորը չէ ձերբակալված։

—

Լոյս յունիսի 16-ի գիշերը անյայտ չարագործներ մտել են Դվօրցօվի փողոցում գտնվող Ցէյտլինի ժամացոյցների խանութը և գողացել են մօտ 2000 րուբլու ժամացոյցներ։

—

«Дума» լրագրի ասելով, Պետերբուրգում յամառ կերպով լուր է պտտում, որ զինուորական դաւադրութիւնը ազատագրական շարժման դէմ իրականանալու մօտ է։ Դաւադիրները շտապով մշակում են դաւադրութիւնը ամենակարճ ժամանակամիջոցում իրագործելու վերջնական ծրագիրը։ Շատերը բացատրում են նրանով, որ իւրաքանչիւր օր անհանգստ լուրեր է բերում զօրքի տրամադրութեան մասին և պակասեցնում է դաւադիրների յոյսերը իրանց ձեռնարկութեան յաջող ելքի մասին։ Վերջին խորհրդակցութեան ժամանակ, որը, ինչպէս լուր է պտտում, եղել է Պետերհօֆում հինգշաբթի օրը, յունիսի 8-ին, քննութեան նիւթ է դարձել երկու ծրագիր, որոնք, դաւադիրների կարծիքով, պէտք է երկար ժամանակով կանգնեցնեն ազատագրական շարժման ընթացքը և վերադարձնեն երկիրը իր հին ձևին։

—

Տեղական ինքնավարութիւնը բարեփոխելու համար կազմված ենթամասնաժողովը մերժեց ընտրութիւնների յարաբերական սիստեմը և կանգ առաւ ընդհանուր քառանդամ ֆորմուլայի վրա։ Ընտրողական շրջան է ընդունվում վօլօստը (համայնքը), և ամեն մի 2000 հոգին ընտրում է մի ձայնաւոր։ «Р. В.»

—

15 հոգուց բաղկացած պարլամենտական մասնաժողովը, կատարելով Պետական Դումայի յանձնարարութիւնը, մշակել է օրինագիծ Պետական Դումայի անդամների անձի անձեռնմխելիութիւնը իրապէս ապահովելու համար։ Այս օրինագծով ժողովրդական ներկայացուցիչները, առանց Պետական Դումայի համաձայնութեան, չեն կարող ենթարկվել քրէական պատասխանատւութեան, կամ զրկվել իրաւունքներից։ Այդ միևնոյն մասնաժողովը մշակում է այժմ ընդհանուրի անձի անձեռնմխելիութեան օրինագիծը։ Մասնաժողովը ընդունեց պրօֆ. Պետրաժիցկու առաջարկութիւնը Ռուսաստանում ապրող օտարահպատակների իրաւունքների պաշտպանութեան մասին, որի հիման վրա օտարերկրացիներից ոչ ոք չը պէտք է արտաքսվի կայսրութեան սահմաններից, առանց դատարանական վճռի, ինչպէս ընդունված է այդ Անգլիայի մէջ։ Մասնաժողովը ընդունել է նոյնպէս օրինագծի այն մասը, որտեղ խօսվում է պօստ-հեռագրական թղթակցութիւնների գաղտնիքը պահպանելու մասին։

—

ՀԻՆ-ՂՐԻՄԻՑ մեզ գրում են. «Կիրակի, յունիսի 4-ին ծխական, ընդհանուր ժողովում Հին Ղրիմի հայ հասարակութիւնը, նոր կոնդակի հիման վրա, ս. Խաչ վանքի համար միաձայն ընտրեց Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանին իբրև վանահայր, յոյս ունենալով որ նա չի սահմանափակվի իր պաշտօնով, այլ կը գործէ նաև հասարակութեան մէջ։ Նոյն ժողովում վճռվեց նաև վանքի տնտեսականը կառավարելու համար հոգաբարձութիւն ընտրել՝ վանահօր հետ միասին գործելու նպատակով։ Անմիջապէս կազմվեց մի դիմում և հեռագրվեց Վեհափառ Կաթողիկոսին։ Հեռագիրը հետևեալ բովանդակութիւնն ունէր. «Հին Ղրիմի հայ հասարակութիւնը միաձայն խնդրում է ուղարկել Եղիշէ վարդապետին ս. Խաչի վանահայրութեան պաշտօնով և թոյլ տալ ընտրել հոգաբարձութիւն վանքի կառավարութեան համար»։

—

«Страна» լրագիրը տեղեկութիւններ է ստացել, որ յունիսի 7-ին Պետերհօֆում կայացած խորհրդակցութիւնը նոր կաբինետ կազմելու հարցի մասին ոչ մի որոշ եզրակացութեան չէ յանգել։

—

«Рѣчь»-ը հաղորդում է, որ Ներքին գործերի նախկին մինիստրի օգնական իշ. Ուրուսօվի Պետական Դումայի մէջ արտասանած ճառը մեծ տպաւորութիւն է թողել բարձր շրջաններում։ Նրա մասին շատ են խօսում Պետերհօֆում, Պետերբուրգում, Սարէլում և Ցարսկոյէ-Սէլօյում։

—

Արժանահաւատ աղբիւրից լուր է ստացել «Курьеръ»-ը, որ պաշտօնազուրկ են արված, 24 ժամվայ ընթացքում առանց բացատրելու պատճառները, Պետերհօֆի պալատների և Պետերհօֆ քաղաքի կառավարիչ գեներալ-լէյտ. Պլէշկօ, նրա օգնական՝ գեն.-մայիօր Կվաշնին-Սամարինը, պալատական վարչութեան գլխաւոր կառավարիչ Արբուզով, պալատական վարչութեան ճարտարապետ Սէմենով, պալատի ներքին մասի կառավարիչ Սազոնով, և հօֆ-կուրիէր Եաւէնէվ։ Հրաժարեցված Պլէշկօյի փոխարէն նշանակված է լէյբ-գվարդիայի ուլանների գնդի գնդապետ Լերմոնտով։

—

Պետական Դումայի անդամ Ուլիանովի գործը քննվելու է դատաստանական պալատում յունիսի 14-ին, և նրան ներթեկանից հանելու կամ յետաձգելու մասին տարածված լուրերը, ինչպէս «Страна»-ն է ասում, սխալ են։

—

Յունիսի 9-ին աշխատաւոր խմբակի բնակարանը առաւօտեանից գրաւել էր ոստիկանութիւնը և չէր թողնում ոչ ոքի ներս մտնել։ Ոստիկանութիւնը այդպէս վարվելով նպատակ ունէր արգելք լինել գիւղացիական համագումարին։ («Страна»)։

—

Ներքին գործերի մինիստրութեան պաշտօնեան, որ ուղարկված էր Աստրախան քննելու մօտ ժամանակներս այնտեղ կատարված անկարգութիւնները, ներկայացրել է դրա առիթով իր զեկուցումը մինիստրութեան։ Այդ զեկուցումը փաստերը լուսաբանում է ոստիկանական տեսակէտով։ Ամբոխը ապօրէն կերպով համախմբվեց և իրան չափազանց անկարգ էր պահում, կարմիր դրօշակներ բարձրացրեց, որոնց վրա մակագրված էին «կեցցէ հողն ու ազատութիւնը», «կորչի ինքնակալութիւնը», «ամնիստիա պահանջեցէք» և այլն: Բայց զեկուցումից կարելի է նկատել՝ որ Աստրախանի հասարակութիւնը չը վախեցաւ զինուորներից, կօզակներից և ոստիկաններից և վճռական դիմադրութիւն ցոյց տուեց: Այդ պաշտօնեան Աստրախանում վնասվողների թիւը որոշում է մօտաւորապէս 100 մարդ: Դրանցից կէս մասը պատկանում է հասարակութեան, իսկ միւս վնասվածները ամբոխի ճնշողներիցն են: Այդ հաշւի վրա Դուման աւելացնում է, որ ոստիկանապետը և երկու պրիստաւները, ինչպէս երևում է, թեթև կերպով են տուժել, որովհետև շատ շուտ են առողջացել և ձեռնարկել ռէպրէսիաները: Ներքին գործերի մինիստրութիւնը ստացել է արդէն մի քանի հաւաքական և անհատական գանգատներ Աստրախանի բնակիչներից, որ ոստիկանապետը և պրիստաւները այժմ վրէժխնդիր են լինում հասարակութիւնից, բռնում են անմեղներին ու յանցաւորներին, բանտարկում, ծեծում ու ծաղրում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ ԲԷԼՕՍՏՕԿԻ ՋԱՐԴԻ ԱՌԻԹՈՎ

—

Երկուշաբթի բանւոր-պատգամաւոր Տօրն հարց առաջարկեց արտաքին գործերի մինիստրին այն բանի մասին, թէ արդեօք առաջադրութիւններ կանվե՞ն ռուսաց կառավարութեանը այն վարմունքի առիթով, որ ունեն իշխանութիւնները Ռուսաստանի ազգաբնակութեան հետ, նախ քան բրիտանական նաւատօրմը կուղարկվի Կրօնշտատ բարեկամական այցելութիւն անելու համար և նախ քան բրիտանական կառավարութիւնը վճռական քայլեր կանի Ռուսաստանի հետ բարեկամանալու համար: Սըր Էդուարդ Գրէյ այդ բանին պատասխանեց. «Մենք չենք կարող այդ բանն անել, Սըր:»

Տէան: Ի՞նչ նպատակ ունի Կրօնշտատ ուղարկել բրիտանական նաւատօրմը: Յայտնի չէ արդեօք պատուարժան ջէնտլմէնին, որ Ռիգայում հրապարակօրէն մահվան պատժի են ենթարկված 14-ամեայ մի տղայ և 18 տարեկան մի աղջիկ:

Կէյր-Հարդի: Միթէ պատուարժան ջէնտլմէնը չը տեսաւ ռուսական Դումայի անդամների ստորագրութիւնը կրող հեռագիրը, որ ռուսաց կառավարութիւնը մինչև այժմ էլ շարունակում է այդպիսի սպանութիւններ կատարել: Միթէ դա բաւական չէ արտաքին գործերի մինիստրութեան համար, որպէսզի նա քայլեր անի ազդելու ռուսաց կառավարութեան վրա և դադարեցնէ այդ գործողութիւնները յօգուտ քաղաքակրթութեան: (Հաւանութիւն):

Սըր-Գրէյ: Ես այդ բոլորի մասին կարդացել եմ լրագիրներում, բայց պաշտօնական տեղեկութիւններ չունեմ այդ մասին: Ինչ վերաբերում է բրիտանական նաւատօրմին, ծովապետութիւնը դիտաւորութիւն ունի ուղարկել իր նաւատօրմը, բալտիական ծովը [illegible] վարժութիւններ կատարելու համար, մշակված ծրագրի համեմատ. նաւերը պէտք է այցելեն ռուսական, շվէդական, գերմանական նաւահանգիստները: Ներկայումս վաղաժամ է ենթադրել որևէ հանգամանքներ, որոնք ստիպէին ծովապետութեանը փոխելու այդ ծրագիրը:

Կէյր-Հարդի: Ի նկատի ունենալով շարունակվող սպանութիւնները, արդեօք կարգադրութիւն չէ՞ անվելու, որ նաւատօրմը ձեռնապահ մնայ ռուսական նաւահանգիստներն այցելելուց, որպէսզի դրանով արտայայտած լինենք մեր դժգոհութիւնը:

Գրէյ: Ես ոչինչ չեմ կարող աւելացնել արդէն հաղորդածիս վրա:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունիսի: Նիստը բացվում է 11 ժամ և 45 րոպէին: Նախագահում է Ս. Ա. Մուրոմցէվը: Նախագահը վիճակ ձգելով որոշում է նոր եկած 25 անդամների տեղերը ըստ բաժինների: Ապա Դուման անցնում է բաժինների՝ ընտրութիւնները ստուգելու առիթով կազմած զեկուցագրերի քննութեան:

Կարդացվում է 4-րդ բաժնի զեկուցագիրը Տամբովի ընտրութիւնների մասին: Բացի Օկունովի ընտրութիւնից, միւսները անվաւեր են համարվում: Իսկ տեղական գեներալ-նահանգապետի և ադնուականների պարագլուխ Զէլօկաէվի անկանօն գործողութիւնների համար Դուման որոշում է հարցապնդում անել: Կօստրոմա նահանգի և Բագու քաղաքի ընտրութիւնները հաստատվում են:

Ապա Լէդնիցկու առաջարկութեամբ հերթից հանվում է Բէլօստօկի ջարդը քննող մասնաժողովի զեկուցագիրը: Դուման որոշում է տպել այդ զեկուցագիրը և անդամներին բաժանելուց յետոյ՝ քննել 2 օր յետոյ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունիսի: Գիւղացիական դաշնակցութեան դէմ գործադրած ռեպրեսիաների հարցապնդումը առաջ է բերում անվերջ վիճաբանութիւններ:

Խօսում են գլխաւորապէս ձախակողմեան հռետորները:

Անիկինը ապացուցանում է, որ գիւղացիական դաշնակցութիւնը իր քաղաքական ծրագրում դրել այն պահանջները, ինչ որ դրել է ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը, միայն դաշնակցութիւնը ընդգծում է գիւղացիների հողային սուր կարիքը: Հռետորը նկարագրում է այն զարհուրելի ռեպրեսիաները, որոնց ենթարկվեցին գիւղացիները խուլիգան կառավարողների կողմից (ձախակողմեանները ծափահարում են):

Նախագահը, սպասելով ծափահարութիւնները դադարեն, դիմում է հռետորին հետևեալ խօսքերով. «Կարգ ու կանօնի եմ հրաւիրում վիրաւորիչ խօսքեր արտասանելու համար, ինչպէս ձեզ, այնպէս էլ ձեզ ծափահարողներին»: (Կենտրօնը և աջակողմեանները ծափահարում են նախագահին):

Եակուշկինը և Պր. Վասիլէվը պաշտպանում են հարցապնդումը, առաջարկելով մի քանի խմբագրական փոփոխութիւններ:

Սօցիալիստ Ռամիշվիլին խօսում է վրացի գիւղացիների մասին և ցոյց է տալիս, որ գիւղացիական դաշնակցութիւնը անհրաժեշտ է գիւղացիական շարժում կազմակերպելու համար: Այդ դաշնակցութիւնը ջարդերի առաջը կառնէ, մինչդեռ ադմինիստրացիայի գործողութիւնները ուրիշ հետևանքների էին հասցնում. Բռնակալ Մեծի ժամանակից ես ոչ մի արտաքին թշնամի Վրաստանին այն անաւելի կործանման չը հասցրեց, ինչպէս Պետերբուրգի կառավարութիւնը:

Նեդոնոսկովի ճառից յետոյ, որ մանրամասնօրէն կանգ է առնում դատաստանական և ադմինիստրատիւ իշխանութիւնների ապօրէն գործողութիւնների վրա, հռետորների ցուցակագրելը դադարում է:

Ռումիանցէվը գտնում է, որ Դումայի նպատակը կայանում է ընդհանուր բարենորոգումների մէջ, ոչ թէ մասնակի հարցապնդումներում:

Միխայլիչենկօն ասում է, որ անհրաժեշտ է դիմել ոչ թէ կառավարութեան, այլ ժողովրդին: Դուման պատասխանատու կը համարվի, եթէ ժողովրդի զայրոյթը տարերային անգիտակից ոյժի փոխվի...

Զեվէչկին, պաշտպանելով հարցապնդումը, ցոյց է տալիս, որ ջարդեր և անկարգութիւններ տեղի չեն ունեցել այն տեղերում, ուր եղել են գիւղացիական դաշնակցութեան բաժանմունքներ, բայց միևնոյն ժամանակ որևէ կազմակերպութիւն չը զգաց իր դէմ այնպիսի հալածանքներ, որպէս գիւղացիական դաշնակցութիւնը:

Ժիլկինը ասում է, որ Պետական Դումայի $1^1/_2$-ամսեայ եռանդուն օրէնսդրական աշխատանքները այդ ուղղութեամբ ոչ մի դրական հետևանքի չը յանգեցին, այդ տեղից էլ ծագում են այն նկատողութիւնները և տրտունջները, որ եռում են Դումայի շուրջը: Այդ նկատողութիւնները արդարացի կը լինէին, եթէ մենք սահմանադրութիւն ունենայինք. բայց սահմանադրութիւն մեզ մօտ չը կայ. նա միայն սաղմնային դրութեան մէջ է: Պետական Դուման այն առաջընթաց մարտիկների խումբն է, որ կռվում է ժողովրդի ազատութեան համար: Հարցապնդումների մէջ պարզաբանած կոնկրէտ դէպքերը բացատրում են ժողովրդին ներկայ մինիստրութեան անպէտքութիւնը, կամայականութիւնը և բռնութիւնը: Գիւղացիական դաշնակցութեան հարցը—հին րէժիմի լուծումը հանդիսանում է նոր ճանապարհ ռուս ժողովրդի համար: Գիւղացիական դաշնակցութիւնը, որ խաղաղ ուղի է ընտրել իր որոշումները իրականացնելու համար, պատասխանեց այն հեքիաթական մանիֆեստի հնդարեան լէգէնդային, որ հող և ազատութիւն էր սուլում, որոնց մասին ռուս ժողովուրդը անորոշ սակայն կաթոգին կերպով մտածում էր շարունակ: Պետական Դուման ի նկատ առնելով գիւղացիական դաշնակցութեան իդէալների իրականացման խաղաղ ճանապարհը, պէտք է որ ցանկայ և պաշտպան հանդիսանայ այդօրինակ դաշնակցութիւններին, ի նկատի ունենալով որ բոլոր ծայրայեղ միջոցները—զինված ապստամբութիւն, ամենավերջին միջոցն է հանդիսանում նոյն իսկ ծայրահեղ կուսակցութիւնների ձեռքում: Պետական Դուման պէտք է իր համակրութիւնը յայտնէ Ռուսաստանը դէպի նոր վերանորոգեալ կեանքը խաղաղ ճանապարհով տանող բոլոր կազմակերպութիւններին: Միայն, միմիայն հասարակական ոյժերի համախմբումը կարող է հնարաւորութիւն տալ Դումային իրականացնելու իր հեռաւոր բոլոր խնդիրները և նպատակները: (կենտրօնը և ձախակողմը ծափահարում են):

Իշխ. Դոլգորուկովը խօսելով գիւղացիական դաշնակցութիւն կազմելու գործում իր ցոյց տված աջակցութեան մասին, մատնացոյց է անում իր խղճի վրա ծանրացած ծանր բեռի վրա, որ հետևանք է այն գիտակցութեան, որ իր հետ մի ժամանակ աշխատող մարդիկ այժմ հեծում են բանտերում, մինչդեռ ինքը գրաւում է ժողովրդական ներկայացուցչի պատուաւոր աթոռը: Գործը ոչ թէ ժողովրդի դէմ գնացող վարչական անձանց մէջ է, այլ ընդհանուր սիստեմում: Մենք անց ենք կացնում հին րէժիմի հոգեվարքի հիւանդոտ շրջանը: Անկազմ մասսաները ներկայացնում են իբրև մարդկային տականք, տականք որ հեշտութեամբ մահաբեր խարշակի է փոխվում: Հռետորը առաջարկում է հարցապնդումը յանձնել մասնաժողովի լրացնելու համար. (կենդրօնում բուռն ծափահածափահարութիւններ):

Եանօպօլսկին ցոյց է տալիս, որ կառավարութիւնը, կռւելով գիւղացիական դաշնակցութեան իդէալների դէմ, այդ կռւում ցոյց տուեց իր տկարութիւնը և անզօրութիւնը:

Դուման միաձայն որոշում է հարցապնդումը յանձնել 33-րդ մասնաժողովին՝ լրացնելու և պարզաբանելու համար:

2 ժամ 45 րոպէին ընդմիջում է յայտարարվում:

Նիստը վերսկսվում է Մուրոմցէվի նախագահութեամբ.

Նաբօկովը խօսք է առնում խօսելու ըստ կարգի: Եւ ի նկատի ունենալով հարցապնդումների անպայման անհրաժեշտութիւնը Դումայի համար և ժամանակի տևողականութիւնը,—առաջարկում է շտապողական հարցապնդումները քննել երեկոյեան ժամը 6-ին, իսկ մնացած հարցապնդումներին նուիրել շաբաթական մէկ նիստ:

Նաբօկովի առաջարկը ընդունվում է:

3 հարցապնդումները յանձնվում են մասնաժողովի, ապա հերթական են ճանաչվում և և ընդունվում են—յունիսի 12-ին և 13-ին Պետերբուրգի բնակիչների վրա կօզակների գործադրած բռնութիւնների առիթով զինուորական մինիստրին արվելիք հարցապնդումը և ներքին գործերի մինիստրին—Օդեսսայի բանտի անկարգութիւնների մասին անելու հարցապնդումը:

Դուման անցնում է Կովկասի պատգամաւորների հարցապնդման, որ վերաբերում է Մինգրելսկի գնդի 27 զինուորներին, Թիֆլիսում զինուորական դատարանին յանձնելու խնդրին. հարցապնդումը հերթական և ստիպողական է ճանաչվում:

Հարցապնդումների մասնաժողովի զեկուցագրերը կը քննվեն ուրբաթ օրերը: Այդ կանոնները չեն վերաբերում վաղվան: Քննվում է 19-րդ մասնաժողովի զեկուցումը Տաւրիկեան պալատի շէնքը ընդունելու կարգի մասին: Վճռվում է, որ Դուման անցնի պալատը կառավարելու հարցի քննութեան:

Ժողովրդական ազատութեան կուսակցութեան հռետորներից մի քանիսը—Իօլօս և Շօլը և աշխատաւորների խմբակից—Բօնդարէվը հակառակ են, որ տնտեսական պարտականութիւնները յանձնվեն վարձկան մարդկանց. հսկելու գործը ընկնում է Դումայի նախագահի վրա: Վճարման սկզբունքը կողմնակի է դեմօկրատական սկզբունքներով և հանդիսանում է սոսկ տեխնիքական հարց: 19-րդ մասնաժողովի զեկուցագրի յօդուածային քննութիւնը Տաւրիկեան պալատի առիթով—առաջ է բերում երկար վիճաբանութիւններ, գլխաւորապէս կարգադրիչ անդամների պարապմունքները վճարելու հարցի նկատմամբ: Յօգուտ վճարման խօսում են Ստախօվիչը և Կօվալևսկին, հակառակ՝ աշխատաւորների խմբակը: Իօլօսը և Վինավէրը պահանջում են ոչ մի խօսք չասել ամառային արձակուրդների մասին (ծափահարութիւններ): Յետագայ համարեա համանիշ վիճաբանութիւններին մասնակցում են Ստախօվիչը, Տենիսոնը և Կօվալևսկին: Վերջում 3-րդ կէտը ընդունվում է հետևեալ խմբագրութեամբ. «Դումայի պարապմունքները դադարեցնելու ժամանակ կարգադրիչ կօմիտէտի անդամները պարգևատրվում են օրական պարէնի քանակով, որ որոշված է Դումայի կանոնադրութեան 23-րդ յօդուածի մէջ: Քուէարկելով Դուման նախագիծը ընդունում է ամբողջովին. անմիջապէս նրան գործադրում է և Երկուշաբթի օրն է նշանակում կօմիտէտի անդամների ընտրութիւնը»:

Ապա կարդացվում է ֆինանսական մասնաժողովի համար ընտրված անդամների ցուցակը, և ընդունվում են երեք հերթական հարցապնդումներ:

Նիստը փակվում է 7 ժամ 35 րոպէին,

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունիսի: Ի նկատի ունենալով, որ Կերչ — Ենիկալեի քաղաքապետութեան մէջ ներկայումս խոշոր անկարգութիւններ են, ամբողջ երկիրը յայտարարված է պատերազմական դրութեան մէջ:—«Голосъ» և «Трудовая Россія» լրագիրները ժամանակաւորապէս դադարեցրել են իրանց գոյութիւնը, որովհետև նրանց խմբագիրները անհնարին գտան շարունակել թերթերի հրատարակութիւնը ներկայ պայմաններում:—Բարձրագոյն հրամանով ոստիկանական վարչութեան վերատեսուչը ներկայ է լինելու Սենատի նիստերին նրա պաշտօնը վարելու է Ս. Պետերբուրգի դատաստանական պալատի դատախազի օգնական Տրուսէվիչը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունիսի: Լրագրային լուրերը Բէլօստօկի ջարդի առիթով դատախազ Կամիշղանսկուն ուղարկելու և սենատորական քննութիւն կատարելու մասին — հիմքից զուրկ են:

ԲԵՐՆ, 14 յունիսի: Ազգային ժողովը համաձայնել է որ Շվէյցարիան միանայ միջազգային շաքարի կօնվենցիային:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ, 14 յունիսի: (Պաշտօնական Թղթակցից): Յունիսի 10-ին Վլադիկավկազին մօտ բանակ դրած 18-րդ լեռնային բատարէյայում յուզմունքներ սկսվեցին՝ որ վերջում անկարգութիւնների փոխվեցին: Յունիսի 13-ի երեկոյեան բատարէյան ապստամբվեց և երեք անգամ թնդանօթ արձակեց, և ատրճանակների գնդակի տարափի տեղաց այն բատարէյաների վրա, որոնք չէին մասնակցում յոյզին, որի ժամանակ մի քանի զինուորներ թեթև վիրաւորվեցին, իսկ մէկը՝ ծանր: Կանչված Ապշէրօնսկի բատարէյային աջողվեց զինաթափ անել ապստամբ բատարէյային առանց արիւնահեղութեան: Անկարգութիւնների ժամանակ կորել է պօրուչիկ Բայկովսկին:

ԱԴԻՍՐՍԿ,: Ագրարային շարժումը նոր ձևեր է ընդունում: Բացի ինքնակամ անտառները կտրտելուց և խոտերը հնձելուց, գիւղացիները սկսել են փչացնել կալուածատէրերի մրգի այգիները: Վերջին օրերս փչացրել են Լիպէբրտի ահագին այգին, ինչպէս և Դանիլօվկի գիւղում գիւղացիներից մէկի այգիները, և տարել են 30 գլուխ անասուն:

16 յունիսի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունիսի: Նոր արդէն կազմակերպվեց պարզ և լիակատար ծրագրով աշխատաւորների կուսակցութիւնը, որ իրան կոչում է նաև ժողովրդական—սօցիալիստիքական կուսակցութիւն: Նրա գործունէութիւնը կը լինի ոչ թէ ծածկամիտ, այլ բաց: Հիմնադիրների մէջ են և պր. Միակօտինը և Պէշեխօնով, Եւլայրէվսկին գրողները և այլն: Կուսակցութիւնը մերժում է որ և է դասակարգի դիկտատուրան և, դասակարգային կազմակերպութեան հետ միասին, նա միացնում է գիւղացիութեան բանուորների և աշխատաւոր ինտելիգենցիայի շահերը:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ, 14 յունիսի: Արևելա-Սիբերիային 18-ին բատարէյան պահնորդութեան հսկողութեամբ ուղարկվեց Կարս:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 14 յունիսի: Զինված չարագործները յարձակվելով երկաթուղային դրամատարի վրա կողոպտեցին 18000 ր.: Հարկահանը և օգնութեան հասած մի բանուոր վտանգաւոր վիրաւորված են, չարագործները փախան:

ՎԱՐՇԱՎԱ,: Զինուորական դատարանը քննելով 9 գիւղացիների գործը, որ մեղադրվում էին դաստակերտների վրա զինված յարձակում գործելու մէջ, 5-ին մահվան դատապարտեց—կախաղանի միջոցով, մնացածներին 16 տարի տաժանակիր աքսորի:

ԲԱԳՈՒ, 15 յունիսի: Գործադուլ արին Թաղիէվի գործարանի բանուորները, որոնք պահանջում են օրավարձը աւելացնել: Գործարանը փակելով 1905 թ. անկարող է պահանջներին բաւարարութիւն տալ: Նաւթային աշխարհի 140 ֆիրմաներից գործադուլ են արել միայն 2-ի բանուորները:

ՆԻՒ-ԵՕՐԿ, 15 յունիսի: Երէկ քաղաքի արևելեան թաղի բնակիչներին անհասկանալի պանիկա պատեց: Հազարաւոր ծնողներ հաւաքվելով ներս էին մտնում հրէական դպրոցները՝ իրանց երեխաներին տանելու համար, որովհետև տարածվեց մի սենսացիօն լուր, որ իբր շուտով հրէական ջարդ կսկսվի և իբր երեխաներին մորթոտելու են: Այդ լուրը ծագեց ըստ երևոյթին այն պատճառով, որ մի քանի հիւանդանոցներում բժիշկները անդամահատութիւններ են կատարում երեխաների վրա: Շուտով ոստիկանական պահեստի խմբերը կանչվեցին: Ոստիկանութիւնը փակեց 20 դպրոց և 3000 երեխաների տուն առաջնորդեց:

ՎԻԵՆՆԱ, 15 յունիսի: Պատգամաւորների պալատը հաստատեց այս տարվայ առաջին 6 ամսվայ ժամանակաւոր բիւջէտը: Ֆինանսների մինիստրը պալատի ուշադրութիւնը հրաւիրեց այն հանգամանքի վրա, որ 1905 թ. պետական եկամուտները զգալի չափով անցան ենթադրվելիք ծախքերից, և որի համար էլ պալատը ընդունեց այն օրինագիծը, որ լիազօրութիւն է տալիս կառավարութեան՝ մի քանի պետութիւնների հետ մինչև 1906 թ. դեկ. 31-ը առևտրական համաձայնութիւններ կապել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունիսի: Այսօր, երեկոյեան ժամը 6-ին, հացթուխների գործադուլը կը վերջանայ, որովհետև միջնորդ մասնաժողովը կարողացել է տերերին և բանուորներին համաձայնութեան բերել: Որոշվել են 9 ժամեայ բանուորական օր, կիրակնօրեայ հանգիստ, ռոճիկների աւելացումն 10—20 % և այլն: Բոլոր արձակվածներն էլ կրկին վեր ընդունվելու են և բոլորն էլ 5 օրվայ անգործ օրերի վճարը ստանալու են:

Յունիսի 14-ին կայացաւ ժողովրդական ազատութեան կուսակցութեան, աշխատաւորների, աւտօնօմիստների, անկուսակցականների 4-ական անդամների, 1 առաջադիմականի, մասնակցութեամբ Հէրցէնշտէյնի նախագահութեամբ և Տատարինի քարտուղարութեամբ հողային փոխ-մասնաժողովի նիստը: Ալադինի առաջարկութեամբ ընտրվեց մի մասնաժողով 3 հոգուց բաղկացած—Հէրցէնշտէյնից, որպէս ժողովրդական ազատութեան կուսակցութեան 42-րդ նախագծի ներկայացուցիչ, Լաւրօվսկուց—որպէս աշխատաւորների նախագծի պաշտպան և Լվօվից—որպէս կոմս Հէյդէնի խմբակի նախագծի պաշտպան՝ համեմատելու 3 օրինագծերը, գտնելու ընդհանուր հիմունքներ հողային բարենորոգման համար, կարգաւորելու և այդպիսով ստեղծելու մասնաժողովի համար աշխատանքների ծրագիր: Հէրցէնշտէյնի առաջարկութեամբ, այդ փոխ-մասնաժողովի կազմի մէջ ընդունվեց և ծայրագաւառի ներկայացուցիչ Ստեցկին: Փոխ-մասնաժողովը իր աշխատանքները կը վերջացնէ յունիսի 16-ի մօտերը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴԷՈՒՍԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՔԻՆՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի. ներքին և ներվային:
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳԶԵԼԻՆՈՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՆԱՐԱՉԵՆԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
ՏԻԿ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—$1^1/_2$-3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Խ. Դ. ԱՐԵԱՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—7—7 և կէս ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: [illegible] ([illegible]) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավէտպօլսկի փողոց, 101, տելէֆօն 1026
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և էլեկտրո-բուժութիւն:
Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՋԻՆԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Գ. Ա. ԲԷՅԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկոպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Փիզիքօթէկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նօմէրներից:
(չ.ու.կ.) 69—100

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առ. և 5—6 երեկ.
Միխայլօվսկի պր. տ. Ծամհանիձէի № 36.
(կ.չ.ու.) 21—50

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրօնական ՀԻՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլավնի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ“
մականունով: Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի: Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով:
Ալէքսանդր Յարութինով
(հ. կ. ե.) 26—100

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը.	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը.	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 1է ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը.	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը.	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր գիշ.
Կր հասնելը.	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

ԲԱՑՎԱԾ Է 1906 Թ. ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՆՈՐ ԿԵԱՆՔ“
Գրական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթի, որ հրատարակվելու է Նոր-Նախիջևանում:
«Նոր Կեանքը» լինելու է առաջադիմական և պատկանելու չէ որ և է կուսակցութեան: Շաբաթաթերթիս բաժիններն են 1) Առաջնորդող. 2) Ժամանակակից հարցեր. 3) Տեղական կեանք. 4) Գաւառական կեանք. 5) Գրական բաժին (ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ, բելլետրիստիկա, բանաստեղծութիւն և այլն). 6) Արտասահմանի կեանք. 7) Քրօնիկօն. 8) Մամուլ. 9) Թատրօն և գեղարուեստ. 10) Շաբաթվայ լուրեր. 11) Գրախօսութիւն. 12) Թղթակցութիւն. 13) Խառն լուրեր. 14) Յայտարարութիւններ:
Գինն է յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը 2 րուբլի:
Հասցէ՝ Нахичевань На-Дону 1-ая Соборная ул. № 23:
9—12 (կ. ե. հ.) Հրատարակիչ՝ Գր. Բեդելեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ի. ԳՈՒՐԳԵՆՕՎ
Խարկօվի համալսարանի մանկաբարձական և գինեկօլօգիական կլինիկայի նախկին օրդինատոր (պրոֆ. Տօլօչինօվի), ընդունում է մանկաբարձական և կանանց հիւանդութիւններ ունեցող հիւանդներին: Ընդունելութիւնը ցերեկվայ 10—1 ժամը: Գօլօվինսկի պր. տուն Մդիվանիի № 12: (կ.չ.ու) 11—15

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներ հանքային ջրերում. Կիսլօվօդսկ հիւանդանոց Ռօսսիա № 14. վեներական և մորթու հիւանդութիւններ: Гостиница Россія № 14. 4—20

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշւի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 176—300

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում
ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ
(Բ. Շնեյնի)
Կուլտուրական պատկերներ Թիւրքիայից: Գերմաներէնից թարգմ. Լևոն Բաբայեան:
(ա.օ.) 3—5

ԵՐԵՒԱՆ քաղաքի ս. Յովհաննէս եկեղեցու համար ՀԱՐԿԱՒՈՐ են երկու քահանայացուներ, որոնք պէտք է ունենան Գէորգեան ճեմարանի կամ թեմական դպրոցի աւարտման վկայագիր: Ցանկացողները կարող են դիմել Երևան նոյն եկեղեցու ծխականներից ընտրված քահանայական յանձնաժողովի անդամ պ. Միքայէլ Աթանասեանին: 3—6

ՍԱՄԱՐՂԱՆԴԻ Աղօթարանի համար հարկաւոր է մի փորձված տիրացու, որը պարտաւոր է լաւ իմանալ եկեղեցական երգեցողութիւնը: Պայմանների համար պէտք է դիմել. Самаркандъ Н. С. Ситарову.
(ա.օ.) 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ՋԱՒԱՐԲԷԿԵԱՆ
Ներքին եւ ներվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7: Լերմօնտօվսկայա փողոց, տուն № 16: Տելէֆօն № 1087:
(ա. օ.) 47—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (ե.ռ.)79—100

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ԿԵԱՆՔ“
Քաղաքական, հասարակական և տնտեսական օրաթերթի, որ քաղաքական պայմանների շնորհիւ առայժմ կը հրատարակուի իբրև
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Բաժանորդագինն է Թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ., դուրսը տարեկան 3 ր., արտասահման տարեկան 4 ր.: Ամսական Թիֆլիսում 20 կ., դուրսը 30 կ., արտասահման 40 կ.: Հատով Թիֆլիսում 5 կ., դուրսը 7.: Բաժանորդագինը կարելի է վճարել մաս-մաս, մանաւանդ բանուորների ու գիւղացիների համար:
Խմբագիր-հրատարակիչ Բ. Իշխանեան
Հասցէն՝ Тифлисъ редакція «Кіанк». Чавчавадская № 4. Արտասահմանից՝ Tiflis Rdaction «Kiank» Tschatschaçadekaia № 4.
(հ. չ. ե.) 2—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Ի. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը: Կուկիա, Սեմէօնօվսկի փողոց № 16:
(ու. կ. ե.) 19—20

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որը աւարտել է գիմնազիայի դասընթացքը ոսկէ շքանշանով, 6 տարվայ փորձառութեամբ, որոնում է դասեր կամ գրասենեակապետի պաշտօն: Հասցէն՝ Тумановская ул. д. № 36 հարցնել Գօգլօեվին: 3—3

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ
Շաբաթ, յունիսի 17-ին
Հայ թատերասիրաց խումբը բարեհաճ մասնակցութեամբ
ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ Տ. ԶԱՔԷԼԻ և ԴԵՐԱՍ. ԱՆԴՐԱՆԻԿԻ
I
կը ներկայացնէ երկրորդ անգամ
ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄ
Ողբեր. 4 գործ. և 5 պատկ. հեղ. Կարինեանի
II
ՍԻՐԱՀԱՐԸ ՍԵՂԱՆԻ ՏԱԿ
Վօդէվիլ 1 գործ. հեղ. Բամալեանի
Մասնակցում են տ. Զաքէլ, օր. Մուրադեան, պ.պ. Անդրանիկ, Անտօնեան, Արմենակ, Գաւրօշ, Ղազարեան, Հմայեակ, Հ. Ղազարեան, Սաֆարեան, Փիրումեան և ուրիշները: Տեղերի գները 1 ր.—10 կ., օթեակ 4 ր.
Խաղամիջոցներին կը նուագէ երաժշտական խումբը: 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է գիտութիւն Թիֆլիսում շներ պահողների, որ նրանց յարմարութեան համար, շներից առնվելիք տուրքը, որի ժամանակը լրացել է անցեալ ապրիլի 1-ին, կը վերցնեն այս տարի Ուպրավայի առանձին գործակալների միջոցով, որոնք նախապէս ցոյց են տալու Ուպրավայի բաց թերթիկները և պարտաւոր են փող ստանալուց յետոյ—տալ որոշված ստացականները և շների վզից կախելու նշանները: 1—2

ԲԺԻՇԿ
Տ. Խախանեան
Ներքին, երեխայոց և վեներական հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը:
Վելեամինօվսկայա փողոց № 22, Նաւտիկօվի տանը: (ե. հ. չ.) 1—15

Լոյս տեսաւ
ԱՌԱՔԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ
ԱՌԱԿՆԵՐԸ
Գինը 50 կոպէկ
Ծախվում են «Կենտրօնական» և «Գուտենբերգ» գրավաճառանոցներում:
(հ. չ. ե.) 5—6

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ
Տրվում են վարձու Պուշկինսկի փողոցի վրա Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան տանը յուլիսի 1-ից, տասն և մէկ (11) և հինգ (5) սենեակներից բաղկացած ամեն, յարմարութիւններով: Պայմանների մասին դիմել ընկերութեան գրասենեակը: 3—3

Անյայտացաւ հոգեկան հիւանդ էլեկտրական տրամվայի նախկին կօնդուկտօր ԿՕՆՍՏԱՆՏԻՆ ԻՄՆԱՇՎԻԼԻՆ: Ով նրա մասին որևէ տեղեկութիւն ունի, խնդրում ենք յայտնել հետևեալ հասցէով Ланчхуты (Кут. губ.) Онуприи Имнаишвили. Ծախսերը կը վճարվեն:
(չ.ու.կ.) 3—4

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի: Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10%—յատկացրված է հայ արհեստանոցների օգտին. Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Գաւխվիլի փողոց, № 13:
(հ. կ. ե.) 27—28

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5